

Բ. ԱԵՅՐԱՆՅԱՆ

ՕԱՂԿԱԾ
ՃՈՒՇԱՐՁԱՆ

ՀԱՅԻ ԵՏՏԵՐԱՆ

891.99

13812

U-39

U Եղիշևուն, Բ.
Տաղիս հուշար-
դան. 2n.

31.99-93

-39

ԲԵՆԻԿ ՍԵՅՐԱՆՅԱՆ

Տ ՀԱՅԹԻՒԹԵԱ 1961 թ.

ՅԱՂԿԱՆ
ՀՈՒՇԱՐՁԱՆ

438/2.

A 29503



Z U M E S Z P U S

ՀԵԿԵՐ ԿԵՎԱԿՈՒՄ ԿԻՑ ՄԱԿԱՐ-ԸՆՍԱՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՒԺ
ԵՐԵԿԱՆ

1948

Յաղիկը Ա. ԳԱՂԳՈՐՑԱՆԻ

**Б. СЕЙРАНЯН
ЦВЕТУЩИЙ ПАМЯТНИК**

{На армянском языке}
Армгиз, Ереван, 1948

ԻՄ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Սիրելի երեխաներ.

Գերմանա-ֆաշիստական զավթիչներից սովետական հողը ազատագրելիս, Հայրենական Մեծ պատերազմում քաջի մահով ընկավ և իրեն անմահության վառքով պըսակեց հայ ժողովրդի դյուցազուն զավակ, Սովետական Միության Հերոս, գնդապետ Լևոն Դարբինյանը:

Գնդապետ Դարբինյանի մարտական կրանքը լի է շատ ու շատ հետաքրքիր գեպքերով։ Նրա մասին կարելի է մեծ գրքեր գրել։ Բայց որպեսզի դուք մոտավոր պատկերացում ունենաք, թե ինչ արտակարգ հատկություններով էր օժտված դնդի հրամանատար Դարբինյանը, ինչպիսի ջերմ ու անմար սիրով էր նա սիրում մեր Հայրենիքը, սովետական մարդուն, իր զինվորներին, իր միակ որդուն՝ Բալլային, որոշեցի նրա կյանքից մի քանի գեպք գըի առնել ձեզ համար։

ՀԵՂԻՆԱԿ



Գնդապետ Ա. Դարբինյան

Կ Ր Ո Ջ Կ Ա Ն

1.

Մեկ անդամ, երբ գնդապետ լևոն Դարբինյանն իր Հրետանավորների հետ միասին անտառի միջով փոխազըրփում էր նոր բնագիծ, շնչառապ նրան մոտեցավ մի պատանի։ Դա շեկ մազերով, կապույտ աչքերով, կոճակի պես կլոր քթով մի փոքրիկ տղա էր։ Պատանին ամբողջապես ողողված էր քըտնքով։ Երեսում էր, որ նա երկար ճանապարհ էր վազել։ Հրետանավորները ջուր տվեցին, հանգստացրին նրան։ Հետո պատանին հալտնեց, որ իրենց գյուղում ֆա՛խստներ կան թաքնված։ Դյուղը ծանոթ էր Դարբինյանին։ Նա գիտեր, որ ֆաշխստներն այնտեղից նախորդ երեկոյան են փախեր Ուստի շատ զարմացավ։

—Միթե կան, —հարցրեց նա։

—Այո, կան, ընկեր գնդապետ։

—Շատ են...

—Զէ, շատ չեն, մի տաս-տասներկու հոգի։ Բուրը հավաքված են մի տան մեջ։

«Կամ չեն հասցըել փախչել, կամ մնացել են՝ մեր զորամասերի թիկունքում դիվերսիոն աշխատանք կատարելու» —մտածեց գնդապետն ու դարձավ պատանուն։

— Կարո՞ղ ես այդ տունը մեզ ցույց տալ?

— Իհարկե կարող եմ: Ես հենց դրա համար եմ եկել...

Երբ հրետանային մարտկոցը դուրս եկավ անտառի եզրը, պատանին մատնացույց արեց գարավանդի սառ-րոտում փոված դյուղն ու անհամբեր ասաց.

— Ալ, այ, տեսնո՞ւմ եք, այն ճերմակ տունը՝ առվի եզրին, կամուրջի մոտ... Հենց նա է, ազնիվ խոսք, հենց այնտեղ են...

Գնդապետը չէր շտապում: Հեռադիտակն աչքերին, նա երկար ժամանակ նայում էր զեպի գյուղը:

— Անունդ ինչ է, — հարցը եց Դարբինյանը:

— Անո՞նս, — տատանվելով կրկնեց պատանին, — ա-նունս, դեռնց ասեմ... Անունս Ֆեղկա է, բայց տղեր-քըն ինձ «Կրոշկա»*: Են ասում:

— Դե, եթե տղերքը Կրոշկա են ասում՝ ես էլ այդ-պես կասեմ: Լսիր, Կրոշկա, չես սխալվում: Գուցե Փա-շիստներն ալդ տան մեջ չեն...

— Զեմ սխալվում, ընկեր գնդապետ, ազնիվ խոսք, Նրանք այնտեղ են, ես գիտեմ... Նրանք իմ մորը սպա-նեցին... Նրանք...

Եվ պատանու շուրթերը դողացին, աչքերը լցվեցին արցունքով,

Գնդապետը զինված ավտոմատավորների մի ջոկատ ուղարկեց, որպեսզի Փրիցներին կենդանի գերի վերցնեն: Բայց երբ ջոկատը վերադարձավ և հայտնեց, որ թշնա-մին խիստ ամրացել է տան մեջ ու նրա ներքնա-հարկում և անձնատուր չի լինում, Դարբինյանը ետ-շրջվեց, գլխով ինչոր նշան արեց մարտկոցի հրամանա-

*) Կրօշկա — այստեղ նշանակում է փոքր, պոտիկ երեխա:

տար Զիպցովին։ Նույն պահին հրանոթի փողն ուղղվեց դեպի գյուղը։ Երբ նշանառությունն ավարտված էր, Զիպցովի հրամանով հրանոթը կրակ բացեց։ Ահռելի դղրդոցի հետ ճերմակ տունը մի պարկ մոխրի պես օդ ցնդեց։ Դարբինյանի սրատես աչքը նկատեց, թե ինչպես թանձր փոշու միջից դուրս նետվեցին երկու սև ստվեր, որոնք փորձեցին փախչել, բայց երկրորդ արկի բեկորներից անջնչացած վայր ընկան։

Կրոշկայի ողեսորությանը չափու սահման չկար։ Ուսերը կծկած, իր փոքրիկ բռունցքները ծնոտի առաջ սեղմած, նա խնդապին բացազանչություններով թոչկոտում էր գնդապետի մոտ։

—Ու ու ու խ'... ու ու ու խ'...—սրտի խորքից ծղրտում էր կրոշկան։ Հրետանավորները նայում էին նրան ու բարեհոգությամբ ժպտում։

Երբ թանձր փոշին անցավ և առվի ափին՝ ճերմակ տան տեղը մնաց մի գորշ ավերակ, Դարբինյանը հարցրեց պատահուն։

—Լաիր կրոշկա, իսկ ո՞ւմ տունն էր այդ...

—Ումը... մեղը...

—Միթե, —ճեռքը պատահու ուսին գնելով, գնդապետը կոացավ ու սկսորված նախեց նրա աչքերին։

—Այս, մերը, ընկեր գնդապետ։ Ում կուզեք՝ հարցրեք... բոլորն էլ գիտեն, որ այդ տունը մերն է...

Դարբինյանը պատահուն ամուր սեղմեց իր կրծքին, ապա նրան փորձերու համար կրկին հարցրեց։

—Բա որ քանդեցի՞նք...

—Ոչինչ, ընկեր գնդապետ։ Ձաշխաներին հաղթենք նոր տուն կշինենք, ավելի լավը...—պատահու այս պատասխանը շատ գուր եկավ Դարբինյանին։ Նա մի պահ մտքերի ետևից ընկավ։

- Գյուղում ո՞վ ունես, Կրոշկա...
- Ոչ ոք: Մորս սպանեցին: Իսկ հայրս պատերազմի սկզբից ֆըռնտումն է:
- Նամակ կմա...
- Զէ, չկա...
- Հրետանավորները պատրաստվում էին ճանապարհը շարունակելու: Գնդապետն ուղղվեց:
- Դե, շնորհակալություն, Կրոշկա, միաս բարե,— ձեռքը մեկնելով ասաց նա: Պատանին հապաղում էր: Նա հայացքը գցել էր գետնին: Հրետանավորները զգում էին, որ Կրոշկան ուզում է ինչ-ոք բան խնդրել, բայց քաշվում է:
- Վերցնենք, ընկեր գնդապետ,— կամացուկ շնչաց Զիպցով:
- Լսիր, Կրոշկա, կուզե՞ս գալ մեղ հետ...
- Կրոշկան պատասխանի փոխարեն ամուր գրկեց գընդապետի ծնկները: Հրետանավորներից շատերի աչքերի մեջ արցունքի կաթիլներ շողացին:
- Դժվար կլինի, տղերք,— մտածկոտ շեշտով խոսեց Դարբինյանը:
- Ոչինչ, ոչինչ, ընկեր գնդապետ: Մենք կորդեգրենք ու կպահենք... — խնդրեցին հրետանավորները: Գընդապետը համաձայնվեց:

2.

Կրոշկան գորամասում աչքի ընկալ որպես ճարպիկ կապավոր և խիզախ հետախուզ: Ասեղի պես ծակում ու անցնում էր թշնամու դիրքերով, չղջիկի պես դուրս էր թռչում լարափակոցների միջից: Զէր վախենում ոչ մթին

գիշերներից, ոչ ահավոր անտառներից, նեղանում էր, երբ իր վրա նալում էին որպես փոքրի, միշտ ինքն էր նոր առաջադրանք խնդրում. Զնայած իր վտիտ մարմնին, կրոշկան չափազանց դիմացկուն տղա դուրս եկավ. ցեխն ու անձրիը, օրերով երթը, կամ անքուն մնալը նրա համար սովորական բաներ էին: Այդ խելոք ու հընարամիտ պատահին զորամասի հրետանավորներին շատ անգամ էր փրկել մահվան վտանգից:

Մեկ անգամ, օրինակ, Զիպցովի մարտկոցն օղակման մեջ ընկափ: Մարտկոցը գտնվում էր տեղանքի վրա իշխող մի բարձունքի լանջին: Բարձունքն օղակած գերմանական տանկերը պատրաստվում էին ուժեղ գրոհի: Մեր հրետանավորների դրությունն անհուսալի էր: Կառլը զորամասի հետ խզվել էր: Դրսից ոչ մի օդնություն չէր կարելի սպասել: Մարտկոցի հրամանատար Զիպցովը, ծանը վերք մտանալով, շարքից դուրս էր եկել: Հրետանավորները շարունակում էին եռանդով պաշտպանվել, բայց զգում էին, որ արկերը հետզհետե պակասում են:

Կրոշկան, որ այդ միջոցին գտնվում էր շրջապատված հրետանավորների մեջ, ըրոշեց ինչ գնով էլ լինի դուրս սողալ ֆաշիստների օղակից, լուր տանել մերոնց:

Բարձունքը բոլորովին լերկ էր: Թփուտները միայն նրա փեշերին էին աճել: Դուրս դալ խրամատից, վաղել դեպի ցած, նույն է, թե մահի բերանն ընկնել: Հապահնչ անել:

Գերմանական արկերը բգկտում էին բարձունքի լանջը, քարի ու հողի ահագին զանգվածներ նետում դեպի վեր, որոնք կրկին գետնին ընկնելով, զլորվում էին դեպի ցած:

Կրոշկան նկատեց այդ ու վճռեց իր անելիքը: Երբ մեկ էլ հողասյուն բարձրացավ դեպի օդը, կրոշկան դուրս եկավ թաքստոցից:

— Դե, ես գնացի, — ասաց նա, կծկվեց տեղում, պինդ գրկեց իր ծնկներն ու գունդ դարձած իրեն նետեց փոշուու ամպի մեջ:

Հրետանավորները նույնիսկ չհասցըին իմանալ, թե
ի՞նչու նա այդպիս միանգամից գլուխկոնձի տվեց:

Բարձունքի թեք լանջով արագորեն գլորվում էր
Կրոշկան: Այդ պահին ոչ մի սրատես աչք չէր կարող
որոշել, թե գլորվողը քար է, գուղձ, թե՞ մի ու բիշ բան:

Մինչև գերմանացիները գլխի կընկնեին— Կրոշկան
իրեն գցեց թփուտներն ու անհետացավ:

Նրա գնալուց կես ժամ անց մեք հեռաձիգ հրետա-
նին սկսեց ոմբակոծել բարձունքի ստորոտները:

— Տղեք, Կրոշկան տեղ է հասել...մերոնք խփում
են, — ոգեշնչված բացազանչեց հրետանավորներից մեկը:

Գերմանական տանկերը խուճապի մատնվելով, ա-
րագորեն հեռացան: Մարտկոցը փրկվեց:

Այդ օրերին զորամասում բոլորի խոսակցության
նյութը Կրոշկան էր: Գնդապետը Կրոշկային պարզեա-
տրեց մեղալով, իսկ Զիսցովը դաշտացին հիվանդանոցից
նամակով շնորհակալություն հայտնեց նրան:

Ալսպես խիզախ ու ճարպիկ տղա գուրս եկավ մեք
Կրոշկան: Բայց հրետանավորները նրան սիրում էին ոչ
միայն այդ խիզախության ու ճարպկության համար,
այլև՝ նրա քաղցր, դուրեկան ձայնի: Կրոշկան լավ էր
երգում, սրտանց, շատ էլ երգ գիտեր:

Բայց ինչու միայն հրետանավորները: Հենց ինքը՝
գնդապետ Դարբինյանը նրանցից պակաս չէր սիրում
Կրոշկային: Նա երգի մի արտակարդ սեր ուներ:

Իր սպաների ու եփբեյտորների ծառայությունը
գնահատելիս գնդապետը միշտ հաշվի էր առնում, թե
նրանց ստորաբաժանումներում ինչպես է դրված մար-
տական երգը: Եթե վատ էր՝ նախատում էր, անձամբ
գնում, կազմակերպում: Իսկ եթե մեկն ասեր, թե իր
ստորաբաժանման մեջ երգիչներ չկան, որ իր դինվոր-

ները ձայն-չունեն — Դարբինյանը կժպտար նրա միա-
մըտության վրա:

— Երգելու համար, — կասերնա, — մեծ ձայն չի հարկա-
վոր: Հարկավոր է ներքին կրակ: Իսկ մերոնք այնքան կրակ
ունեն, որ եթե սրտները բացեն — բոցը երկինք կելնի:

Հետո գնդապեան աշքերը կլոցելով, մտքերի ետևից
ընկած, կավելացներ.

— Է՞հ, զիտես ինչ արժի, երբ հանդստի ըստեխն
հենվում ես խրամատին, ձեռքդ զլիսիդ տակ դնում ու
կամաց ծոր տալիս... ԶԵ՛, ովհան երգել զիտենար, անպայ-
ման գիտենալ...

Դարբինյանն ինքն այնքան քաղցր էր երգում, որ
լսելուց չէիր կշտանա: Երգում էր մի քանի լեզվով՝
հայերեն, ուռւերեն, վրացերեն, աղբբեշաներեն, ուկրա-
իներեն: Ահա թե ինչու նրա զինվորները, ինչ ազդի էլ
լինեին, ոչ միայն լսում, այլև սիրով ձայնակցում էին
նրան: Գնդապեան իր շտաբում թառ նվազող մի կապա-
վոր ուներ՝ նազարեթյան տղանունով: Հանդստի ըստե-
ներին, թառի նվազակցությամբ երգում էր իր սիրած
երգերը, կամ նվազի տակ արտասանում իր հորինած
բանաստեղծությունները: Իսկ նա բաղմաթիվ բանա-
ստեղծություններ ուներ գրած, բոլորն էլ ոգեշունչ՝ հաղ-
թանակի հավատով լեցուն: Ահա մի քառյակ 1942 թվին
ուղմանակատում զրած նրա բանաստեղծություններից.

Պարձանք չէ, արդյոք, այս ահեղ ժամին

Կրակի գծում յուր տեղն ունենալ.

• Եվ անտուն, անմայր որբերի կանչին

— Վրե՛մ, — զոչելով զբոհի գնալ...

Նուրբ ու զգայուն հոգու տեր այս մարդը, երբ հրե-
տանավորների բլինդաժում առաջին անգամ լսեց կրոշ-
կալի երգը — մանկան պես լաց եղավ:

Բլինդաժը լի էր մախորկայի ծխով։ Լամպի աղստ
լույսի տակ հազիվ գծվում էին պատահու շուրջը համա-
խըմբված զինվորների մտահոգ դեմքերը։ Կրոշկայի թըր-
թըրացող ձայնը դուրեկան հովի պես սրսփացնում էր
լսողների սիրտն ու հոգին, կտրում այդ մուժ ու լոռ-
նավ բլինդաժից, տանում հեռան հեռան...

Երգում էր կրոշկան.

Սպասիր ինձ, և ես կդամ
Միայն թե շատ սպասիր...

Եվ այդ երգն այնքան մոտ ու հարազատ էր թվում
զինվորներին, որ կարծես հյուսվել էր նրանց զգաց-
մունքներից։

Դարբինյանը, որ գլուխը պատին հենած զմալլված
նայում էր երգող պատահուն, սկսեց կամաց ձայնակցել
նրան։ Մյուսներն ակամա միացան նրանց։ Երգը հետզ-
հետեւ ավելի ուժեղացավ, և բլինդաժը լցվեց ներդաշնակ
ձայների քաղցր ելեկջով։

Հետո, երբ երգը լոեց, գնդապետը կոխ բոնողի շարժ
ու ձեռվ իր խոշոր ձեռքը մեկնեց գեպի կրոշկայի ուսը,
բռնեց ու նրան քաշեց դեպի իրեն։

— Է՞ս, դու՝ ժեռի ճուտ, արի մի տեսնենք՝ այդ ի՞նչ
ես մերոնց տիրեցնում... Արի մի կոխ բոնենք...

Բլինդաժը թնդաց զինվորների զնդուն ծիծաղից։

Երգից ու կատակից հետո, երբ կրոշկան ինացավ,
որ հետեյալ օրը գնդապետը տեսության է զնալու Զիգ-
ցովին, խնդրեց, որ իրեն էլ տանի։

— Կտանեմ, բայց մի պայմանով՝ ամբողջ ճանապար-
հին պետք է երգես ինձ համար...

— Կերգեմ, — համաձայնեց կրոշկան։

— Այնտեղ էլ պիտի երգես...

— Կերպեմ...

— Գալիս էլ...

Կրոշկան մանկան չարաճճիությամբ գլուխը տըմբ-
ալմբացրեց:

3.

Դաշտային հիվանդանոցը տեղավորված էր թղկա-
տերև սոսիներով եղերված մի փոքրիկ ավանում:

Օրն արևոտ էր: Հիվանդանոցի պատուհանները բաց
էին: Երբ գնդապետի «վիլլիսը» կանդ առավ փայտաճաղ
ցանկապատի մոտ, Զիպցովը պատուհանից նկատելով
Կրոշկային, խնդապին բացագանչեց:

— Կրոշկա... ալ զու, սատանի ճուտ...

Կրոշկան ցած թուավ ու վագեց զեպի պատուհանը:
Ու մինչ գնդապետը շենքի ոլորուն միջանցքով կհասներ
Զիպցովենց պալատը—Կրոշկան հենց պատուհանով իրեն
ներս գցեց: Սրտառուչ էր նրա և Զիպցովի հանդիպումը
Զիպցովը երկար ժամանակ նրան իր գրկից բաց չէր
թողնում: Պալատի մլուս վիրավորները չէին էլ կասկա-
ծում, որ նրանք հայր և որդի են: Կրոշկան նոր, գեղե-
ցիկ համազգեստի մեջ էր: Նա հագել էր իր տոնական
շորերը, խնամքով լուղել, փայլեցրել էր սապոզները:
Մահուդի փոքրիկ կիտելի կրծքից կախել էր «Խիզախու-
թյան համար» մեղալը: Իր վրա ուղղված ջերմ հայացք-
ներից նրա դեմքը կարմրել էր: Նա այնպես կարոսով
էր ուզում հանդիպել Զիպցովին, խոսել, զրուցել նրա
հետ, նստել նրա մոտ, երգել նրա համար:

Բայց ահա, հանդիպման առաջին մի քանի ըոպեից
հետո, սեսյակի պատերն ասես ճնշեցին նրան: Կրոշկան

առիթ էր վնտրում շուտ դուրս գալ հիվանդանոցի առևոտ բակը, խաղալ այստեղ, երբ Զիպցովը նրան խընդրեց երգել հիվանդների համար:

Կըոշկան քաշվում էր: Նա չղիտեր կարելի՞ է, թե՛ ոչ Բայց երբ գնդապետը զլսավոր բժշկի համաձայնությունն առավ, նա խկույն սկսեց: Հիվանդներից սեկը բարձի տակից դուրս քաշեց զրպանի փոքրիկ հարմոնը, մուտեցրեց շուրջերին ու նվագակցեց նրան: Հարեան սենյակների հիվանդները մեկ-մեկ հավաքվեցին. ոմանք ներս մտան, ոմանք կանգնած մնացին դրան առջև, միշտանցրում: Նրանք ազահությամբ կլանում էին պատասխու ձայնի յուրաքանչյուր հնչյունը: Երգը նրանց մոռացնել էր տալիս և վերքի ցավ, և հիվանդություն: Նրանք երգի ազդեցությամբ մտքով փոխադրվում էին տուն, տեսնում, գդվում իրենց հարազատներին— մեկն իր մորը, մեկն իր կնոջը, մեկն իր բալիկին, մեկն էլեղբորը, քրոջո, հարազատին:

— Երգիր, բալիկ ջան, երգիր, — խնդրում էին ամեն կողմից: Եվ նա երգում էր, Եվ դուցե շատ երգեր, եթե չպատահեր մի անսպասելի դեպք:

Միջանցքում լսվեց մի աղեկտուր հեծկլտոց եվ մեկը շրմփոցով փովեց հատակին: Բոլորը ըշվեցին դեպի նա: Կրոշկան լսեց. բժիշկները վրա վազեցին: Ընկնողը ծանր վիրավորներից էր, մի կապիտան, որ երգի ձայնի վրա տեղից անսկատ վեր էր կացել, պատեպատ ընկնելով, եկել մինչեւ Զիպցովենց պալատի դուռը և, հուզմունքը դսպել չկարողանալով, ցած ընկեր: Նա շարունակում էր արտասվել: Տեսարանը ցնցող էր: Բժիշկներն ու Դարբինյանը նրան տարան վեպի իր պալատը:

Կրոշկան հանցագործի նման սսկվել, կուչ էր եկել
Նա ամեն ըոպե սպասում էր քթիշկների ու հիվանդների
կշտամբանքին: բայց ոչ ոք նրա վրա չէր բարկանում:
Ընդհակառակը, հիվանդներից ամանք դեռ հանգստացնում
էին:

—Ոչինչ, բալիկ ջան,—ասում էին նրանք,—գոսպի-
տալի կյանքն արագես է... ամեն բան կպատահի...

Կրոշկան սրտնեղանքից բակ դուրս եկավ: Նոր էր ի-
շել քարե աստիճաններով, երբ նկատեց ցանկապատի մո-
տով անցնող բեռնատար մեքենաները:

—Կրոշկա,—ձայնեց շոփերներից մեկը:—ի՞նչ ես շի-
նում այստեղ, արի զնանք... Մեքենաներն իրենց զորամա-
սինն էին: Առիթը շատ հարմար էր: Կրոշկան ուրախացավ:

—Սպասիր, գալիս եմ,—ձայնեց նա, արագ ետ դար-
ձավ, մտավ շենքը, հավանորեն զնդապետից թույլավու-
թյուն խնդրելու, Զիպցովին հրաժեշտ տալու համար:

Քիչ հետո նա կրկին դուրս թուավ ու վազելով,
բարձրացավ մեքենան:

4.

Երբ Դարբինյանը պատրաստվում էր հեռանալ հիվան-
դանոցից, զնաց մեկ անգամ էլ տեսնելու վիրավոր կա-
պիտանին: Վերջինս արդեն խաղաղվել, հանգստացել էր:
Գնդապետին նկատելուն պես նա փորձեց ուղղվել մահ-
ճակալի վրա: Ոտքերից մեկը, որ հանել էր օդեալի տա-
կից, կրկին ներս քաշեց: Կապիտանն ուրիշ զորամասից
էր: Դարբինյանը նրան չէր ճանաչում: Դա անշուշտ չէր
խանգարի հին ծանոթի պես մոտենալու, սրտաբաց զը-
րույցի բոնվելու նրա հետ:

Բալց այդ օրվա դեպքն այնքան խոր տպավորություն էր թողել նրա վրա, որ երբ նորից մոտեցավ կապիտանին, իրեն փոքր-ինչ կաշկանդված զգաց:

— Ներիր, բարեկամ,—խոսեց նա:— Զգիտեի, թէ չէ թույլ չէի տա, որ երդի...

Հիվանդի գունաթափ շուրթերը դողացին:

— Ա՞հ, ի՞նչ եք ասում, ի՞նչ եք ասում ընկեր գնդապետ... ընդհակառակը... ես անչափ երախտապարտ եմ... ես եկա ավելի մոտիկից լսելու... եթե միայն իմանայիք, թե նրա երգը ինչպես հուզեց ինձ... Բայց Դուք նստեցեք, ընկեր գնդապետ, խնդրում եմ, մի քանի րոպե...

Հերթապահ սանիտարը աթոռ մատուցեց: Գնդապետը նստեց հիվանդի մոտ: Կապիտանը մի պահ լուր հետո, ասես ինչ-որ բան մտաբերելով, անհամարձակ դմեց Դարբինյանին.

— Ո՞վ է այդ պատանին, ընկեր գնդապետ...

— Կրոշկան է, իմ արծիվներից...— պատասխանեց Դարբինյանը:— Բայց դու ի՞նչու ես հարցնում...

Կապիտանը լուց: Նա դժվարանում էր խոսել:

— Գիտեք ինչ, ընկեր գնդապետ,—վերջապես սկսեց նա:— Դե ի՞նչպես առեմ, որ Դուք ինձ հասկա նաք: Ես մի զավակ ունեի: Նա էլ էր երգում: Զեր որդու ձայնը այնքան նման է նրա ձայնին, որ ես մի պահ կորցրի ինձ...

— Իսկ ո՞րտեղ է քո զավակը...

— Զգիտեմ: Պատերազմը սկսվեց, կնոջս հետ թողեցի գլուղում... Եվ ոչ մի լուր չունեմ... — ասաց նա, ապա համառոտակի պատմեց իր ընտանիքի, իր ծննդավայրի մասին:

— Նրա անունն է՝ էլ էր կրոշկա:

— Ոչ, նրա անունը կըոշկա չէր: Նրա անունը Ֆե-
ռյան՝ էլ:

Գնդապետը հաճկարծ մտքերի ետևից ընկավ. «Ֆե-
ռյա», «Ֆեռյա»... «Փեղկա», — յուրովի կըկնում էր նա:

— Զեր որդին ի՞նչ եղավ... — հարցըց վիրավորը:

— Ո՞գ, կըոշկան... մեկնեց զորամաս...

— Ա՞հ, ի՞նչ լավ էր երգում, և ինչպես կուզեի նո-
րից լսել նրան...

— Եթե կուզես մոտ օրերս կրկին կըերեմ նրան...

— Ես շատ, շատ շնորհակալ կլինեմ...

Դարբինյանը հրաժեշտ տվեց ու դուրս եկավ հի-
վանդանոցից...

Ճանապարհին նա անընդհատ մտածում էր կըոշկայի
մասին, վիրավոր կապիտանի մասին: Նա այլև չէր
կասկածում, որ կրոշկան կապիտանի հարազատ զավակն
է: Բայց հիվանդանոցում, կապիտանի քայլքայված նյար-
դերը նորից չցնցելու համար, նա թաքցրել էր այդ: Իս-
կապես, ի՞նչ զարմանալի է կյանքը: Ի՞նչե՞ր ասես չեն
կատարվում: Որքան կուրախանա կապիտանը... բա կըոշ-
կան... ի՞նչ երջանիկ հանդիպում կլինի:

Եվ մեքենայի մեջ օրորվելով, Դարբինյանն ասես
նախապես ճաշակում էր հոր և որդու առաջին հանդիպ-
ման քաղցրությունը, ապրում նրանց երջանկությամբ,
ուրախանում նրանց համար:

Փոքրիկ, փոքրիկ տղա է կըոշկան, բայց ի՞նչ մեծ
փորձություններ են բաժին ընկել նրան: Ի՞նչպիսի՞ զըր-
կանքներ են վիճակվել նրան: Կրոշկան ոչ միայն տե-
սավ, այլև մասնակցեց այս մեծ պատերազմին: Նա տեսավ
ֆաշիստների գաղանությունները, ապրեց հարազատ մոր
դժբախտ կորուստը: Եվ արդյոք դրանից չէ, որ կըոշ-
կայի երգն այդքան հուզիչ է, ալդքան ազդեցիկ:



— ԶԵՇ, շատ կուրախանա մեր Կրոշկան, — անընդհատ կրկնում էր Դարբինյանն ու ինքն իրեն ժպտում:

Այդ քաղցր մտքերի ազգեցությամբ նա ակամայից վերհիշեց նաև իր ծննդավայրը, իր անշուք մանկությունը:

... Ահա Զավախքի գեղատեսիլ սարերն ու դաշտերը: Ահա սիզապանձ Սբուլը, որ բարձրանում է իրենց գյուղի՝ Ալաստանի դիմաց: Ահա Ճուբարեթի անտառը, ուր տարիներ առաջ նստել է իր հայրը՝ անտառապահ Խնկանոսն ու մտածել աշխարհի մասին:

Ասում են այդ անտառում մի ծառ կա, որի վրա Խնկանոսը սիրով փորագրել է Լոռնի ծննդյան տարեթիվը՝ 1905 թիվ:

Լոռնը հորը չի հիշում: Նա հազիվ երկու տարեկան լիներ, երբ հալլը մեռավ: Նրա մանկությունը ևս որբությամբ անցավ: Բայց ինչ մանկություն էր այդ — անմիտ ու անիմաստ: Եվ ինչ համեմատություն նրա ու Կրոշկալի մանկության միջև:

Ահա նա ուզում է իր մանկությունից մի լուսավոր բան վերհիշի: Բայց ինչը հիշե: Այս, որ փայտե սուրը ձեռքին զիշերը փախչում էր անից, որպեսզի կենդանի գայլ բռնի: Այս, որ դդումի վրա աչքեր, քիթ ու բերան էր փորում, հետո դդումը ծակում, նրա մեջ մոմ վառում ու զիշերը զնում ձիթհանքի դիմաց՝ մի գոմի կտուրի, որպեսզի ձիթհանքից դուրս եկող գյուղացիները տեսնեն ու սարսափեն այդ կրակե աչքերով «սատանալից», իսկ ինքը խնդա նըանց վրա:

Այս, երբ ինքը Կրոշկալի հասակին էր, իր անմիտ կատակներով վախեցնում էր մարդկանց:

Մինչդեռ Կրոշկան իր փոքրիկ բազուկների բոլոր ուժերը, իր ամբողջ կյանքը տալիս է Հալրենիքի աղատությանն ու անկախությանը:

Եվ Դարբինյանն այնպես էր ուղում Կըոշկային
երջանիկ հոր հետ գրկախառնված տեսնել...

Զէ՞ որ Կըոշկան արժանի է անչափ երջանիկ լի-
նելու...

Մի քանի օր հետո, երբ Զիալցովը արդեն զորամաս
էր վերադարձել, Դարբինյանը միջոց գտավ Կըոշկալի
հետ միասին մեկնել հիվանդանոց:

Դարուն էր: Դաշտերը կանաչել էին, ծառերը ծաղ-
կել բայց ուղմբի ու ականի հարվածներից խոշտանգ-
ված հողի վրա պարզ ու որոշակի գծվում էին սև վեր-
քերը:

Խճուղին վտանգավոր էր: Ուստի «վիլլիսը» թեթե-
վութամբ թոշում էր խճուղուն զուգահեռ ձգվող սայլի
ճանապարհով:

Կըոշկան նստել էր մեքենավարի ու Դարբինյանի
արանքում: Գնդապետը մի ձեռքով գրկել էր նրան, որ-
պեսզի պատանին իր օրորումներով չխանգարի մեքենա-
վարին:

Երկար ժամանակ նրանք լուռ էին: Հետո գնդա-
պետը դարձավ պատանուն.

— Կըոշկա: Զէ՞ արի պայմանավորվենք, այսօրվա-
նից ես քեզ այլևս Կըոշկա չեմ կոչի, այլ՝ Ֆեդյա... թող
բոլորն էլ այդպես կոչեն: Ախր ինչ Կըոշկա ես դու...
Հասակդ է փոքր, իսկ կյանքդ... կյանքդ... շատ մեծ է,
Ֆեդյա: Հա, Ֆեդյա, մի բան հարցնեմ. հայրիկիդ հի-
շում ես...

— Հալրիկիս... — պատանու աչքերը փալեցին, —
իհարկե, հիշում եմ...

— Կուզեի՞ր տեսնել...

— Տեսնել... — Ֆեդյան գլուխը հենեց գնդապետի
կրծքին ու լուռ մնաց:

Գնդապետի կուրծքն ասես խնդությամբ լցվեց։ Նրա սիրաը նեղվում էր. նա շտապում էր. չգիտեր ճանապարհն է երկար, թե մեքենան է դանդաղ ընթանում։

Մինչդեռ ֆեղյան այնքան էլ գոհ չէր իր ուղերությունից։ Այն օրվա դեպքը խորապես ազդել էր նրա վրա։ Նա որոշել էր այլևս հիվանդների համար չերգել, որպեսզի նրանք իրենց վատ չզգան։ Բայց այս անգամ, իհարկե, չէր կարող մերժել գնդապետին։

Այժմ որքան ավելի էին մոտենում հիվանդանոցին, այնքան ավելի էր տխրում նա։

— Ոչինչ, ոչինչ,—մտածում էր գնդապետը, — շուտով ուրախությունից այնպես վեր-վեր կթռչես, որ...

Հանկարծ օդից լսելի դարձավ ինչոր տհաճ վայուն։
— Վեր ու ու ու... Վեր ու ու ու ...

— Մմբակոծիչներ են... — բացազնչեց գնդապետը։

Շոփերն իսկույն մեքենան թեքեց ու թափով քշեց դեպի մոտակա ջևատը։ «Վիլլիսը» նոր էր թաղվել կանաչ ճյուղերի մեջ, երբ քաղցած ոհմակի վայունով «յունկերսների» խումբն անցավ նրանց գլխի վրայով։

— Տեսնես մւր գնացին, — մտածեց գնդապետը։ «Վիլլիսը» դեռ անշարժ կանգնած էր իր տեղը։ Մոտակայքում՝ մի ինչոր տեղ գետինը դղրդաց։

— Մմբակոծեցին, — խոսեց գնդապետը։ — Բայց ինչը կարող էին ոմբակոծել... այս կողմերում կարևոր օքեկտներ, չկան...

Դարբինյանը նկատելիորեն մոայլվեց։

Մմբակոծությունը նորից ու նորից կրկնվեց։

— Տարօրինակ է, — այս անգամ գլուխը մեքենայից դուրս հանելով, ճյուղերի արանքից նա փորձեց նայել հեռուն, բայց ոչինչ չտեսավ։

Քիչ հետո, երբ օդը կրկին խաղաղվեց, մեքենան

գուրս եկավ թփուտներից ու շարունակեց իր ճանապարհը։ Բոլորը լուռ էին։ Ոչ ոք չէր ուզում խախտել ստեղծված լոռությունը։ Մեքենան թռչում էր առաջ ու առաջ։

Երբ տեղ հասան—հիվանդանոցն այլևս չկար։ Գերմանական ինքնաթիռները ոմբակոծել էին այն, և հիվանդանոցի տեղ գոյացել էր ավերակների մի ահագին կույտ։

Փլատակների մեջ երկում էին ծռմոված մահճակալներ, փոշոտված անկողինների, մարդկային մարմինների արյունոտ ծվեններ։

Տեսարանը ցնցող էր։

Ու թեև Դարբինյանը գիտեր, որ Ֆեղյան ավելի ցնցող տեսարանների է ականատես եղել, բայց չգիտեսինչու, նա չուզեց, որ պատանին այս մեկն էլ տեսնի։ Գնդապետն իր դողահար ափով իսկույն փակեց նրա գեմքը, պատանու գլուխն ամուը սեղմեց իր կըժքին և շոփերին կարգադրեց մեքենան ետ շրջել։

«Վիլլիսի» ցնցումները գնդապետի աչքերից պոկում էին արցունքի կաթիլներն ու շաղ տալիս նրա դրկի մեջ ծվարած պատանու վրա։

—Գնանք, Ֆեղյա, գնանք,—խաղաղ ձայնով ասում էր Դարբինյանը։ Այս արյունը միայն արյունով կարելի է մաքրել...

ԶԻՆՎՈՐԵԿԱՆ ԽՈՐԵՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Գնդապետ Լևոն Դարբինյանի զորամասը կընկակոխ հետապնդում էր թշնամուն, մեր հայրենի հողը քայլ առ քայլ մաքրելով ֆաշիստներից:

Դարբինյանը գիշեր-ցերեկ հանգիստ չուներ: Ամեն ժամ, ամեն րոպե նա իր զինվորների ու սպաների հետ էր: Կովի թեժ պահին իրեն կնետեր դիրքերը: Կհալտնը վեր մերթ այստեղ, մերթ այնտեղ, ոգեսրելով, բորբոքելով ու ազմիկներին: Կրակ էր ասես, որ իր հետ բերում էր անսահման ջերմություն: Որտեղ էլերեար—զինվորների ուժերը կտամնապատկվեին: Որտեղ էլ հնչեր նրա մարտական կոչը՝ շուրջը գոթորիկ կբարձրանար:

— Արծիվներ,—այսպես էր Դարբինյանն անվանում իր խիզախ զինվորներին: Եվ այդ խոսքը նրա շուրջերից պոկվում էր կրակի կտորի պետ: Նրա կոչը լսելով, զինվորները հեղեղի նման ենում էին տեղից, սրբնթաց գրոհի գնում թշնամու դեմ:

Դարբինյանը լավ զորական էր և լավ ընկեր: Հանգըստի կամ դադարի կարձատե ժամերն անգամ նա անց էր կացնում իր զինվորների ու սպաների հետ: Անթիվ, անհամար հեքիաթներ գիտեր, առակներ ու առածներ: Կատակն ու ծիծաղը շուրջին, սրամիտ խոսքը լեզվի ծայրին, նա իր ուազմիկների հետ ոգեսրված զրուցում էր հաղար ու մի բանի մասին: Իսկ երբ նա կանգնում

Էր զինվորների մեջ—իսկույն աչքի էր ընկում, որովհետև մյուսներից թիկնեղ էր, լայնալանջ, կոր արծվաքթի տակ խիռ, երկար բեղեր ուներ, որոնք սեռությունից փայլում էին ծիծեռնակի թևերի պես. ահա թե ինչու շտաբում նրան «ուսաչ» էին կոչում, որ կնշանակեր բեղավոր: Աչքերը մանր էին, խորամանկ ու խելացի: Ծիծաղելու ժամանակ նրանք ասես կուլ էին դնում:

Եվ ինչպես էր ծիծաղում, ինչպես կչկչում: Զէիր կարող չվարակվել նրա առողջ, զընզուն ծիծաղից:

Դարբինյանը մի խկական հոգեբան էր: Մեկ էլ տեսար մոտեցավ:

— Տիսուր ես, մեր տղա, ինչ է պատահել...

— Ոչինչ, ընկեր գնդապետ...— ուզում ես մի կերպ ժածկեր, բայց չես կարողանում: Դարբինյանը շարունակում է.

— Գիտես ինչ, բարեկամ, մեր զորամասը մի ընտանիքի պես է: Բոլորս նարազատ մարդիկ ենք՝ ցավակից ու կարեկից, պատմիր, մի քաշվիր...

Եվ դու պատմում ես, թեթևանում, հանգստանում: Զգում ես, որ Դարբինյանն ինքն էլ քեզ հետ միասին թեթևացավ, հանգստացավ:

Դարբինյանի համար ամենաթանկագին բանը մարդըն էր՝ իր զինվորի կյանքը: Նա ամեն ինչ, ամեն ինչ անում էր, որպեսզի քիչ արյան, քիչ զոհերի գնով շատ գործ անի: Այդ բանը նա սովորել էր մեր ժողովրդի ու Սովետական Բանակի առաջնորդ, հանճարեղ Ստալինից: Ահա թե ինչու Հայրենական Մեծ պատերազմի ժամանակ ուազմական փորձին ու հմտությանը հավասար, նա գործադրում էր իր ուազմական խորամանկությունն ու հնարամառությունը:

Քանի-քանի անգամ նա փոքրաթիվ ջոկատներով

հարձակվել ու ջախջախել է թշնամուն, կամ մեծ վնաս-
ներ է պատճառել նրան։ Բայց միշտ դործը կազմակեր-
պել է այնպես, որ թշնամին երբեք գլխի չի ընկել իր
հետ կատարված խաղը։

* * *

Ահա այսպիսի մի դեպք պատահեց 1943 թվի գար-
նանը։ Դարբինյանը թիկունքից տանկեր ու բեռնատար
մեքենաներ էր ստացել։ Նա հրամայեց տանկերից եր-
կուսը և մեքենաներից տասներկուսը ուղարկել լեռների
մեջ գործող իր գնդերից մեկին։ Բայց որովհետև վաղուց
այդ գնդում չէր եղել, որոշեց անձամբ գնար Ճանա-
պարհը վտանգավոր էր, ուստի վերցրեց զի՞նված մար-
տիկների մի ջոկատ։ Միակ խճուղին անցնում էր Փա-
շիստների կողմից գրավված գյուղերի մոտով։

Երեկոյան կողմ Դարբինյանը գեմ առավ այդպիսի
մի գյուղի։ Նա կարող էր սուս ու փուս անցնել։ Բայց
որոշեց մի քիչ «անհանդստացնել» քրիցներին և եթե
հնարավոր լինի՝ մեքենաները լցնել բեռով։

Երբ Դարբինյանի երկու տանկն ու մեքենաներն
իջնում էին լեռան լանջով՝ ֆրիցները նկատեցին ու սկսե-
ցին կրակել։ Բայց բարեբախտաբար գյուղի և այդ լեռան
միջև անտառ կար։ Դարբինյանն շտապեց անտառի վեշն ու
ծածկվեց ֆաշիստների աչքից։ Այստեղ նա կանգ առավ։
Թշնամու կրակը դադարեց։ Դարբինյանը հետախույզներ
ուղարկեց գյուղ։ Շուտով նրանք վերադարձան, լուր բե-
րեցին, թե թշնամին խիստ անընդատած է գյուղում, մեծ
քանակությամբ զորք ու զինամթերք ունի։

Բոլորը սպասում էին գնդապետի վճոխն։

— Պատրաստվել գիշերային գրոհի, — հրամայեց
Դարբինյանը։

Զինվորները թեթևացած շունչ քաշեցին։ Նրանք գիտեին, որ ուժերն անհավասար են։ Թշնամին այնքան զորք ու զինամթերք ունի, իսկ իրենք՝ երկու տանկ, տասներկու դատարկ մեքենա։ Բայց եթե գնդապետը որոշեց զիշերային գրոհի դիմել, ուրեմն անպայման մի խորանանկ ծրագիր է կազմել։ Իսկ նրա խիզախ ու համարձակ ծրագրերը միշտ պսակվում են հաջողությամբ։

Դարբինյանը հետախուզուլզների տված տեղեկություններից ելնելով, գրոհի պլան մշակեց։ Նա իր մոտ կանչեց նաև տանկիստներին, բացատրեց նրանց անելիքները։ Հետո նույն ձևով՝ մյուս զինվորներին ու մեքենավարներին։

Ամենահետաքրքիրը մեքենավարների առաջադրանքը դուրս եկավ։ Նրանք մութն ընկնելուն պես իրենց մեքենաներով պետք է քողարկված գնային լեռան թիկունքը և լույսերը վառած այնտեղից կրկին գային անտառի եզրը։ Այստեղ նորից պիտի մարեին, նորից գնային ու լույսերը վառած վերաբառնային։ Եվ այսպես՝ մինչև գրոհը սկսելու ըոպեն։

Մեքենավարները հասկացան գնդապետի խորամանկ ծրագիրը։ Նրանց ուրախությանը չափ ու սահման չկար։ Մթության մեջ հետաքրքիր շղթա ստացվեց։ Տասներկու մեքենա, իրարից համաշափ հեռու, լեռան լանջով պտույտ էին գործում ու վերաբառնում, գնալիս՝ լույսերը հանդցրած, գալիս՝ վառած ու հեռվից նայողին այնպես էր թվում, թե հարլուրափոր մեքենաներ, անընդհատ շարքով գալիս, հայ գալիս են։ Ի՞նչ են բերում... Դեպատերագմի ժամանակ ուազմաճակատում ուրիշ ի՞նչ կրերեն—զորք ու զինամթերք։ Ուրեմն մի մեծ, շատ մեծ զրոհ է նախապատրաստվում։

Թշնամու կալազորը խուճապի մեջ էր: Բոլորը շնորհ էին: Այս ի՞նչ անսպասելի ձեղքում է կատարվեր: Կայազորի պետը գլուխը կորցրած ըռպեն մեկ կապվում էր շտաբի հետ և տագնապահար հաղորդում:

— Գալիս են...

— Էլի են գալիս...

— Զորքի փոխադրությունը շարունակվում է...

— Նորից են գալիս...

Բայց թե հրտեղից են գալիս, ի՞նչպես են գալիս— դժվար էր ասել:

Շատաբը նույնպես գլուխը կորցրած չգիտեր ինչ անի: Օժանդակ ուժ էր հարկավոր ուղարկել, բայց որտեղից հանեին, երբ բոլոր հատվածներում էլ դրությունը լուրջ էր: Իսկ նահանջի հրաման չէր կարելի տալ, որովհետեւ դյուղն իշխող դիրք էր գրավում շրջապատի վրա: Այդ պատճառով էլ նրանք վաղօրոք ամրացրել էին գլուղը, մեծ քանակությամբ զորք ու զինամթերք տվել նրա կայազորին:

Երբ մեկ էլ կալազորի պետը սարսափած հայտնեց, թե արդեն հինգ հարյուրերորդ տանին ու ավատմեքենան եկավ, շտաբի պետը կատաղեց.

— Պաշտպանվիր, խոզի մռութ, քեզ ալդտեղ հաշվապահ չեն նշանակել:

Ի՞նչ աներ, մնց աներ կալազորի պետը: Ալդքան զորքի ու տեխնիկայի դիմաց ով կդիմանա: Նրա ուղարկած հետախույզներից ոչ մեկը ետ չդարձավ: Նրա հրամանով հրանոթները կրակում էին զեպի խճուղին, հըրթիոնները բորբոքում օդը: Թշնամին զայլույթից սրտաճաք էր լինում, բայց ի՞նչ օգուտ...

* * *

Գիշերվա մի ժամի Դարբինյանը գրոհի հրաման տվեց։
Տանկերն աղմուկով ճեղքեցին գեղի գյուղը։ Մթության
մեջ ավտոմեքենաների մոտոռների հզոր հոնդլունը լցվեց
գյուղի փողոցները։ Զենքերի կրակոցն ու մարտիկների
հաղթական «ուռան» միանալով ալդ խլացուցիչ աղմու-
կին, շշմեցրին թշնամուն։

— Հանուն Հայրենիքի, հանուն Ստալինի, արծիվ-
ներ, առաջ—հզոր, առնական ձայնով բացազանչում էր
Դարբինյանը ու անխնա հարվածում փախչող թշնամուն։

Լուսաբացին գյուղն ամբողջապես գրավված էր
Գնդապետ Դարբինյանը դիտում էր հարուստ ռազմավա-
րը, երբ մի պիոներ, շնչառապառ մոտեցավ նրան։

— Բնկեր հրամանատար, մեր գյուղի Փաշիստները
ևս փախան։ Սպասում ենք, ինչու չեք գալիս։ Ահագին
զենք ու զինամթերք է մնացել...

— Իսկ դու ո՞ր գյուղացի ես...

— Այ, էն՝ հարեւան գյուղացի...

— Ասում ես՝ փախան...

— Այս, էստեղի նահանջողներին միացան ու լեղա-
պատառ փախան...

— Այ քեզ բան... — Ճեղքերն իրար զարկելով, սըր-
տանց ծիծաղեց Դարբինյանը։ Լուրը ճիշտ դուրս եկավ։
Թշնամու խուճապն այնքան ոեծ էր եղել, որ հարեւան
գյուղի կալազորը նույնպես դիմել էր փախուստի։

* * *

Իսկ մի ավելի հետաքրքիր դեպք կատարվեց նույն
թվի օգոստոսի 3-ին։ Գնդապետ Դարբինյանի գորամասը
Բանակի մյուս ստորաբաժանումների հետ միասին գրո-

հի ելնելով, կատաղի մարտերից հետո, դուրս եկավ
Բելգորոդ տանող երկաթուղին:

Զորայան գլխամասն արդեն կտրել-անցել էր երկաթ-
զիծը, երբ մոտակա Բելկա կոչվող անտառի թափու-
տից անսպասելիորեն դուրս սողացին գերմանական տան-
կերը և իրենց մըրկային կրակով զորասյունը բաժանե-
ցին երկու մասի:

Առաջին դիվիզիոնի հրամանատար, ավագ լեյտենանտ
Կոմիսենկոն արկերի սուլոցների ու պայթյունների տակ
խսկույն դիրքավորեց իր դիվիզիոնի մնացած ուժերը:
Ականանետային մարտկոցները կրակ բացեցին գերմա-
նական տանկերի վրա: Դաշտը ծածկվեց պայթյուննե-
րով: Տանկերը կանգ առան: Նրանց մի մասը, որը
զեռ գտնվում էր թափուտում, շարունակում էր կրակել
իր թաքստոցից:

Վտանգը չափազանց մեծ էր: Պետք էր ճշտել թրշ-
նամու ուժը, ապա ամեն գնով միավորել շարասյունը:

Դարբինյանը անհապաղ զործի դրեց իր հմտւա հե-
տախույզներին: Շուտով նրանք վերադարձան և հայտ-
նեցին, որ անտառի մեջ ևս մեծ թվով տանկեր կան:

— «Վագրեր» են, — մեջ ընկապ հետախույզներից
ամենափոքրը՝ Ֆեդկան, — և ինչքան էլ խնամքով են քո-
զարկված: Մի մասը մտել է խիտ մոշուտը, մյուս մասը՝
ծածկվել կանաչ ճյուղերով, բաղեղներով:

«Վագրերն» անընդհատ կրակում էին երկաթզիծն
անցած մեր զորքերի վրա, ձգտելով նրանց ավելի մե-
կուսացնել հիմնական ուժերից:

Դարբինյանը մոայլվեց: Նա ելք էր փնտրում: Նա
համոզված էր, որ մութն ընկնելուն ալես Փաշիստական
տանկերը վճռական գրոհի կդիմեն, որպեսզի հիմնովին
ջախջախեն մերոնց:

— Հը, ի՞նչ անենք, ընկերներ,—դիմեց գնդապետը
իր մոտ գտնվող սպաներին:

— Զգիտենք, ընկեր գնդապետ... դրությունը լուրջ
է...—պատասխանեցին նրանք:

— Զէ, ընկերներ, պետք է ելք գտնել: Պատերազմի
մեջ անելանելի բան չկա— Ասաց գնդապետն ու շա-
բունակեց մտածել:

— Գուցե ուղղակի գրոհենք ու միանանք մերոնց...
զենքի ուժով...—խոսեց սպաներից մեկը՝ լեյտենանտ
Պովարենկինը:

— Իհարկե, վատ չէր լինի: Բայց զոհեր շատ կտանք:
Սյ, դա է ինձ մտահոգում,—մտքերի ետևից ընկած պա-
տասխանեց Դարբինյանը:

Բոլորը լոեցին: Հանկարծ լսելի դարձավ մոտոռների
հոնդուն: Ինքնաթիոներ էին: Նրանց ձայնը հեռվից էր
գալիս:

— Թշնամունն են,—խոսեց Պովարենկինը:

— Այո, «յունկերսներ» են,—ավելացրեց Դարբին-
յանը, որ մոտոռների ձայնից ճանաչում էր Փաշիստա-
կան ինքնաթիոների տեսակները:

— Երեխ օգնության են դալիս իրենց «վագրերին»,—
անցավ բոլորի մտքով և նրանք խոժոռավեցին:

Վատանզը սաստկանում էր: Օդային հարձակումը
կարող էր ջլատել ու մեծամեծ վնասներ պատճառել մե-
րոնց:

Սպաներն իրենց կասկածը ստուգելու համար նա-
յեցին գնդապետի դեմքին. տեսնես ի՞նչ կորոշի, ի՞նչ
կասի նա:

Բայց զարմանալի մարդ էր այդ շրջանաց դորա-
կանը: Բնությունն ասես նրան հենց այդպիսի ճակա-
տագրական վայրկանների համար էր ստեղծել:

Մոայլվելու փոխարեն նրա դեմքը գլուխ արած
մարդու դեմքի պես միանգամից պայծառացավ: Սև, եր-
կալն բեղերը ետ գնացին ու շուրթերի վրա մի խորա-
մանկ ժպիտ խաղաց:

Գնդապետն իսկույն բացեց իր դաշտային պայու-
սակն ու սկսեց հրթիռներ ջոկել: Նա ուսումնասիրել էր
թշնամու ազդանշանային սիստեմը, գիտեր, թե որ հըր-
թիռն ինչի նշան է:

Երբ գերմանական ոմբակոծիչները երևացին, Դար-
բինյանը քողարկված տանկերի ուղղությամբ օդի մեջ
բաց թողեց երկու կանաչ հրթիռ: Սկզբում թվաց, թե
«յունկերսները» ոչինչ չնկատեցին: Բայց շուտով նրանք
շրջվեցին դեպի անտառն ու կատաղած ոմբակոծեցին
այս:

Տանկերը փորձեցին փախչել: Բայց իզուր: Արդեն
ուշ էր: Ծանր ոռւմբերի հարվածների տակ նրանցից շա-
տերը ջարդ ու փշուր եղան, բռնկվեցին բոցով: Իսկ
երեկոյան կողմ Դարբինյանը կարողացավ կապ հաստա-
տել մեր տանկային բրիգադայի հետ, նրա օգնու-
թյամբ գերմանական «վագրերի» վերջին մնացող՝
ները ջախջախել ու ցրել: Զորասյունը կրկին միացավ
ու շարունակեց իր հաղթական երթը՝ դեպի արևմուտք:

Գնդապետ Դարբինյանը ահա այսպես խաբեց թըշ-
նամուն, գերմանական «յունկերսների» կրակն ուղղեց
գերմանական «վագրերի» դեմ:

Ամեն անգամ, երբ հարկ էր լինում այս դեպքի մա-
սին պատմելու, Դարբինյանի մարտիկները հպարտու-
թյամբ եղրափակում էին.

— Զէ, տղերք, մեր գնդապետի հետ կարող ես բո-
ցերի միջից էլ առանց խանձվելու դուրս դալ...

ՀԱՅՐԻԿԻ ՆԸՄՍԿԲ

Այեն անգամ, երբ հայրիկից նամակ էր ստացվում, փոքրիկ Բալլան նստում էր մայրիկի մոտ և խնդրում, որ նամակը բարձրածայն կարդա, նա գիտեր, որ հայրիկըն անչափ սիրում է իրեն և անպայման մի քանի տող իրեն պիտի նվիրած լինի: Նա նույնիսկ անգիր գիտեր հայրիկի նամակի սկիզբը:

«Իմ սիրելի Յուլյա, իմ անգին, իմ անուշ Բալլա»— համարյա միշտ այսպես էին սկսվում գնդապետ Լեռն Դարբինյանի նամակները: Հետո հայրիկը պատմում էր մարտական էպիզոդներ, գրում էր իր ընկերների և իր մարտիկների քաջագործությունների մասին, իսկ վերջում՝ անպայման մի քանի տող նվիրում էր հատկապես Բալլալին. «Անուշ ջան, լավ սովորի, որ Հայրենիքի համար պիտանի մարդ դուքս գաս»:

Իր մասին Դարբինյանը միշտ նույնն էր դրում. «Կամ կմեռնեմ որպես հերոս, կամ ետ կդամ որպես հերոս»:

Հայրիկի նամակները ոգնորում էին Բալլային և նա ամեն օր դասերը խնամքով պատրաստում ու այնպես էր զնում դպրոց:

Բալլան մայրիկից խնդրում էր ոչ միայն հայրիկից ստացած նամակները կարդալ, այլև այդ նամակների պատասխանը: Հետո նա մոր նամակի տակ իր ձեռքով

ավելացնում էր մի քանի տող: Գրում էր, որ լավ է սովորում, ուսուցիչներն ու աշակերտները գոհ են իրենից, դպրոցում չարություն չի անում, տանն օդնում է մայրեկին:

Մոր նամակներից մի բան դուք չէր դալիս Բալլային: Նրան թվում էր, թե մայրը որոշ բան ճիշտ չի գրում:

Այ, օրինակ, ձմեռը մոտենում է, ցուրտն սկսվել է, իրենք դեռ փայտ չեն ստացել, իսկ մալրը դրում է, որ վասելիքով ապահովված են: Կամ թե չէ՝ տանը տնտեսական դժվարություններ կան, իսկ մալրը գրում է, թե իրենք ամեն ինչով ապահովված են: Նա այդ մասին հարցըց մորը:

— Այսպես է պետք, բալիկ ջան,— գորովանքով պատասխանեց մայրն ու համբուրեց որդու աչիկները:

Երևի նրան թվաց, թե Բալլան հասկացավ ամեն ինչ: Բայց Բալլան ոչինչ չհասկացավ: Նա չիմացավ, թե ինչու է այդպես պետք:

* * *

Մեկ անգամ Բալլան շուտ տուն եկավ դպրոցից: Մայրը, որ հիվանդանոցում վիրավոր զինվորներ էր խնամում, դեռ չէր վերադարձել: Սենյակը ցնւրտ, ցնւրտ, ինչպես սառցարան: Նա շատ քաղցած էր: Պայուսակն իսկույն դրեց սեղանին ու բացեց պահարանը: Այսանդ միայն հաց կար: Պանիրը նոր էր վերջացել, իսկ մայրն այդ օրերին չէր հասցըել խանութ գնալ: Հացն էլ գոնե փափուկ լիներ: Ճնր, ճնր, հազիվ էր ծամվում:

Զգիտես ինչու, Բալլան իսկույն ճիշեց մոր նամակները և նրա սիրտը պղտորվեց: Այ, համարյա ոչինչ չկա

ուստելու, իսկ մայրը գըում է՝ ամեն ինչ կա, ամեն ինչ
լավ է:

Եվ Բալլան ցանկություն զգաց մորից գաղտնի
հորը նամակ գրելու, ամեն ինչ ճիշտ պատմելու: Թող
հայրիկն իմանա, ինչ կա որ: Թող նա գիտենա, որ ի-
րենք էլ այստեղ են դժվարություն տանում, բայց երբեք,
երբեք հույսները չեն կտրում. մայրիկն օգնում է վի-
րավորներին, իսկ ինքը դպրոցում առաջին աշակերտ-
ներից է: Այսպես մտածեց, նստեց ու գրեց, բայց նա-
մակն ալսպես չստացվեց: Կարդաց, մեկ ուղեց պատուի
մեկ էլ տատանվեց:

— Զէ, չեմ պատոի,— ասաց նա. գարակից մի ծրար
հանեց, հասցեազրեց, բայց ծրարը փակելուց առաջ նա-
մակը մեկ էլ կարդաց: Կարդաց ու մի քիչ մտածեց.
ինչ-որ մի բան դուր չեկավ նրան: Գրիչը ձեռքն առնե-
լով ջնջեց մի տեղ, հենց այն տեղը, ուր ասվում էր, թե
սենյակը ցուրտ է, իսկ իրենք դեռ փայտ չեն ստացել:
Քիչ հետո նա մի ուրիշ տող էլ ջնջեց, որ վերաբե-
րում էր մթերքների պակասին:

Բայց մի տող մնաց: Նա տատանվում էր. ջնջի, թե
ոչ, ալդ տողի մեջ նա հորը խնդրում էր պահածոներ
ուղարկել: Մտածեց-մտածեց ու մեկ էլ ինքն իրեն հան-
գըստացըրեց, «ինչ կա որ... Հայրիկը գնդապետ է, իսկ
զորամասում պահածոներ՝ ինչքան ուղես... թող մի քա-
նի տուփ ուղարկի»:

Նամակը փակելով Բալլան շտապեց դուրս, զցեց
մոտակա փոստարկղը ու իսկույն տուն վերադարձավ:
Երբ տուն եկավ, նստեց սեղանի մոտ, նոր միայն զգաց
իր արածը: Ի՞նչ հիմար տղա է ինքը. միթե կարելի է
ալդպիսի բան գրել. և այն էլ՝ մայրիկից ծածուկ: Ի՞նչ
կասի հայրիկը, ինչպես կմտահոգվի նամակը կարդալուց

հետո: Նա մեկ որոշեց խսկույն գնալ, ետ վերցնել: Բայց
ինչպես: Ել ով կարող է փոստարկով բացել: Արդեն ուշ
էր: Եվ խոր սրտնեղանքից Բալլան արտասվեց:

Երբ մայրիկը տուն եկավ, Բալլան արդեն՝ հանգըս-
տացել էր: Բայց նրա աչքերն ուռած, կարմրած էին:

— Այս ի՞նչ է, բալիկ ջան, դու լաց ես եղել,— ան-
հանգստացավ մայրիկը:

Բալլան չկարողացավ թաքցնել.

— Այո...
— Իսկ ի՞նչնե...

— Իսկ դու ի՞նչու ուշացար...
— Այ, այ, այ, չես ամաչում... Միթե դրա համար
կարելի է լաց լինել,— ժպտալով խոսեց մայրն ու գրկեց
նրան:— Ախր ես խանութ էի գնացել: Ալ, աես, քեզ հա-
մար ի՞նչ եմ բերել...

Եվ նա ձեռքի զամբյուղը բացելով հանեց թարմ
ձուկ, երշիկ և հրուշակեղեն:

— Հիմա ձուկը կտապակեմ և մենք միասին կճաշենք:
— Ես ոչինչ չեմ ուզում:
— Ի՞նչնե...
— Հաց եմ կերել...
— Յամաք...

— Ի՞նչ կա որ, թող ցամաք լինի,— պատասխանեց
Բալլան և գրասեղանի մոտ նստելով, գրքերը հանեց, որ
դասերը սովորի: Բայց այդ օրը նա ոչնչով չկարողացավ
զբաղվել: Մտքի մեջ՝ հորն ուղարկած նամակն էր: «Ախր
ի՞նչնե ուղարկեցի, ի՞նչու է», ի՞նչնե...»— անընդհատ հարց
էր տալիս իրեն ու պատասխան չէր գտնում:

— Ախ, երանի տեղ չհասնի, երանի կորչի... Զէ՞ որ
մայրիկը մեկ-մեկ գանգատվում է, թե մայրիկի ուղար-
կած նամակը չի ստացել: Երանի այս մեկն էլ կորչի...

* * *

Անցավ ուղիղ երկու ամիս։ Բալլան համարյա մոռացել էր նաևակի մասին։ Երբեմն հիշում էր ու սրտի դողով հարցնում մորը։

— Մայրիկ, հայրիկից նամակ չկա...
— Զէ, բալիկ ջան, բայց ինչու ես անհանգստանում,

կոտ էլի...

— Դե վաղուց նամակ չենք ստացել... չինի՞ թե...
— Ի՞նչ...
— Զինի թե նրա նամակը կորչում է ճանապարհին... պատահում է չէ...
— Այս, բալիկ ջան, պատահում է...
Եվ Բալլան թեթևացած շունչ էր քաշում։

Վերջապես մեկ անգամ, երբ Բալլան տուն եկավ, նկատեց, որ մայրը տխուը է։ Նրա սիրտը դողաց։ Առանց ձայն-ծպտուն հանելու գնաց, նստեց գրասեղանի մոտ ու պայուսակը բացելով, հանեց տեսրերը։ Նա ամեն կերպ ուզում էր ձեւցնել, թե դասերն է պատրաստում։ Բայց ուշքն ու միտքը մոր կողմն էր։ Ահա մայրն եկավ, կանգ առավ իր մոտ։ Բալլան գլուխը դիտմամբ չբարձրացրեց։

— Լոիր, Բալլա, — խոսեց մայրը, — դու հայրիկին առանձին նամակ ես գրել։

Բալլան շփոթվեց։

— Միայն ճիշտն ասա...
— Այո... ես մենակ էի... գրեցի... — կմկմաց Բալլան,

մոր ձեռքի մեջ ինչ-որ ձերմակ թուղթ նկատելով։
— Ահա պատասխանը, կարդա ու էլի ետ տուրտ։

Մայրը ձեռքի թուղթը հանդիսա գրեց սեղանին ու գնաց խոհանոց։

Բալլան նամակը վերցրեց, նայեց, բայց ոչինչ
չտեսավ, Նրա աչքերը մթնել էին: Թիչ հետո նա ճանա-
չեց հոր ձեռագիրը: Հայրը գրել էր պարզ, հատ-հատ
տառերով, որպեսզի Բալլան ինքը կարդա: Նամակի ա-
ռաջին բառերը Բալլայի աչքերը բացեցին:

«Ի՞մ սիրելի Բալլա»— այսպես էր սկսում նամակը:
Բայց հետո ինչքան Բալլան խորանում էր, այնքան
ավելի էր հուզվում: Հայրը գրում էր, որ ստացել է Բալ-
լայի նամակը, կարդացել ու տիրել: Տիրել է ոչ թե նրա
համար, որ իր բալիկը պահածոյի կարիք է զգում, այլ
նրա համար, որ դպրոցը, պիոներական ջոկատը նրան
լավ չեն դաստիարակել:

«Իմ անուշիկ՝ բալիկ,— գրում էր հայրը,— ես քեզ
շատ եմ սիրում. բայց քեզ հավասար սիրում եմ և իմ
զինվորներին: Եթե պետք է լինում՝ ես իմ հազի շառի-
կը հանում ու տալիս եմ նրանց: Ես նրանց բերանից ոչ
մի տուփ պահածո չեմ կտրի և ուղարկի քեզ: Իսկ իմ
մասին, կարող ես հավատացած լինել որ օրերով չեմ
հիշում, թե պետք է բան ուտել:

Երեկ թեժ կոխվ էր: Իմ արծիվները պրոհեցին ու
աղատագրեցին չորս նոր գյուղ, ֆաշիստների ստրկու-
թյունից աղատագրեցին հազարավոր ծերունիների, կա-
նանց ու մանուկների: Ընդունիր այս լուրը, որպես պա-
պայից ստացած ամենաթանկագին նվերը: Ավելի բավ
բան ես այստեղից չեմ կարող ուղարկել»:

Երբ մայրիկը խոհանոցից դուրս եկավ, Բալլան գլ-
լուխը ձեռքերի մեջ առած, արտասվում էր:

Մայրիկը մոտեցավ նրան, հանգստացրեց, համբու-
րեց ու ասավ.

— Ինչու ես լալիս: Պետք չէ: Դրա փոխարեն դու
պահիր պապալի նամակը և միշտ հիշիր նրա խոսքերը...

ԿԱՅԺԱՎՈՐԸ

Նամակաբերը ճակատավին գնացքի մեքենավար էր՝
միջահասակ, պնդակազմ մի մարդ, թուլս աչքերի վրա
թառած կիսախանձ հոնքերով:

Երբ Յուլյան դուռը բացեց — մաքենավարը բնաղդա-
բար երկու քայլ ետ դնաց, ձեռքի ծրարը մեկնեց դեպի
նա, հետո զրպանները քրքրելով գտավ կայծաքարի
մի կտոր, դրեց ծրարի վրա և թեթևակի ժպտաց:

— Այս էլ Ձեր ամուսնու նվերը՝ ուազմաճակատից ..

Յուլյայի մարմնով մի քաղցր դող անցավ: Ամուս-
նուց նա վաղուց տեղեկություն չուներ, ահա վերջապես
ծրարի վրա՝ Լեռնի ձեռագիրը: Տարօրինակը, սակայն, ա-
մուսնու ուղարկած նվերն էր՝ մի կտոր կայծաքար: Նա
ծրարը վերցնելով մեկ կայծաքարին նայեց, մեկ նամա-
կաբերին և, զարմանքը հաղիվ զապած, եկվորին ներս
հրավիրեց:

— Շտապում եմ, ներեցեք, — հրաժարվեց վերջինս, —
իսկ կայծաքարի մասին՝ մի ուրիշ անգամ... Իս մի հե-
տաքրքիր պատմություն է... Առավիմ ցտեսություն... —
Եվ մեքենավարը մողայիկ սանդուղքներով շտապ իջավ
ցած:

Նրա գնալուց հետո Յուլյան մատների մեջ անընդ-
հատ շոշափում էր կայծաքարի կտորը, զննում նրա ան-

տաշ կողերը, որոնք դուան ճեղքից թափանցած լույսի
տակ արձակում էին բազմերանդ ու կախարդիչ ցոլքեր:

* * *

Գերմանական կայազորի պետ Վիլի Կուգելը երա-
կար ժամանակ այն կարծիքին էր, որ բնության տա-
րերքից ամենաահավորը կայծակն է. կփայլատակի հա-
լոցքի նման, ամենի ճայթյունով կղարկի ու կանհետա-
նա: Բայց ահա դտնվեց ավելի ահավորը, և այն էլ ոչ
թե երկնքում, այլ երկրի վրա: Դա արծվաքիթ, լայնա-
լանջ մի պարտիզան էր, ու մորուքը մինչև կրծքի կեսն
իջած, մոռայլ հոնքերի տակ՝ դույդ շանթարկող աչքեր:

Թե ով էր նա, կամ որտեղից եկավ—ոչ ոք չգիտեր,
միայն նրա երևալու օրից Կուգելի կայազորը դարձավ
խառնված շնաձանձի բուն:

Կայտնվեր մերթ ալս ճամփի վրա, մերթ այն պա-
հեստի մոտ, մերթ կամքջի տակ, մերթ ափտոշարի առջե,
կավերեր, քամուն կտար և այնպես կանհետանար, որ
ասես ծուխ էր՝ մերվեց օդի մեջ: Կայազորի սպաներին
հերթի էր գըել, իսկ զինվորները նրա համար դարձել
էին կենդանի թիրախներ: Օր չէր անցնի, որ մի ցնցող
լուր չհասներ Կուգելի ականջին, չկատաղեցներ նրան:

— Զերբակալել... մաս-մաս անել... խոշանգել... կա-
խել... կըակի բերանը տալ...—սպանում էր Կուգելը
սեամորուքի հասցեին, սակայն՝ ապարդյուն:

Նա ստիպված եղավ սեամորուքին որսալու համար
առատ զիսագին խոստանալ: Դա էլ չօգնեց: Վերջապես
Կուգելը հրամայեց կալանավորել զյուղում և նրա շրջա-
կայքում հանդիպած բոլոր մորուքավոր մարդկանց: Այդ
մեկը նրա ստորագրյալները կատարեցին մեծ եռանդով:

Բանտարկյալների թիվն օրն-օրին ավելանում էր ի հաշվի հարեան զյուղերի ծերունիների, բայց սևամորուք պարտիզանի ոգին շարունակում էր իշխել զյուղի վրա։ Մի անասնական երկլուղ էր պաշարել կուգելին։ Հնարկներ՝ նա կհրաժայեր մոխիր դարձնել զյուղի շրջակարգի բոլոր անտառները, որովհետեւ ամեն ծառ, ամեն թուփ դարան մտած մի սև մորուք էր թվում նրան։ Այդ սարսափի մասին քաջ տեղյակ էին խոնավ ներքնահարկում բանտարկված ծերունիները, որոնք հպարտանքով սղալում էին իրենց մորուքներն ու բացագանչում։

— Այ թե ինչ ասել է սև մորուք...

* * *

Մեկ օր ձերբակալվածների մեջ երեաց (ինչպես արդեն սովորաբար ասում էին)՝ մի նոր «մորուք»։ Ներքնահարկի կիսախավարում դժվար էր որոշել նրա տարիքը, բայց նայելով հնամաշ, ծվեն-ծվեն դարձած շորերին, կոշիկների փոխարեն երկաթալարով ոտքին փաթաթած բրեգենտե լաթերին, դեմքի խոր կնճիռներին, կարելի էր եղբակացնել, որ նորեկը դաժանությունից ու փորձանքից հալածված մի «մորուք» է, անից ու նորմալ կացությունից զրկված մի մարդ, թերևս՝ մուրացկան։

— Այս ուր բերին ինձ, եղբալրներ. ախր ես ոչինչ չեմ արել... ի՞նչ է իմ մեղքը, — տարակուսած ու աղերսալի խոսեց նա։

— Մորուքդ է մեղավոր, բարեկամ, մորուքդ, — այս ու այն կողմից բացագանչեցին հները։

— Միթե դու չգիտես, — լրացրեց իգնատ պապը, որն իր լրջախոնությամբ առանձին հարգանք էր վայելում բանտարկյալների մեջ, — որ զերմանացիները մորուքից

վախենում են, ինչպես գող շունը՝ մահակից, դայլը՝ կրակից և օձը՝ արծվից... իսկ դու ի՞նչ մարդ ես, որտեղացի...

Նորեկը տվեց հեռավոր շրջաններից մեկի անունը, ապա հայտնեց, որ իր տունը հրդեհելու օրից թափառում է գյուղից-գյուղ, հաց է մուրսում:

— Ա, թե գտել են, համ, —քըթմնջացին այս ու այն կողմից:

— Ում են գտել, — շվարած հարցրեց նորեկը:

— Սևամորուք պարտիզանին... Ախը մեղ բոլորիս նրա համար են բանտարկել, — պատասխանեց Իգնատ պապը և համառոտակի պատճեց սևամորուքի մասին:

— Վայ, աստված անիծի այդ սևամորուքին, — անիծեց նորեկը:

— Դե, դե, ձայնդ կտրի, թե չէ աչքերդ բնահան կանենք, — սպառնացին մյուսները և բռունցքները սեղմած վրա քշեցին:

Բալց Իգնատ պապը զսպեց նրանց:

* * *

Նորեկին Երկու անգամ հարցաքննության տարան:

Քննող սպան կայազորի պետի կշտամբանքներից ազատվելու համար, նրա բացակայությունից օգտվելով, որոշեց անհապաղ գնդակահարել մուրացկանին, կեղծ արձանագրություն կազմել՝ սևամորուք պարտիզանի դատավճռի մասին: Առիթը շատ հարմար էր: Նա շտապեց իր մտահղացումն ի կատար ածել:

Զինվորների օղակում մահապարտը ճանապարհ ընկալ կեպի գյուղի ծայրամասը: Նա քայլում էր հանգիստ, ոտքերը ճանապարհի փոշու մեջ քարշ տալով և

այնքան անհոգ ու անտարբեր, որ կարծես հուղարկավորելիս լիներ մի անծանոթ դադաղի: Ճանապարհն անցնում էր Կուգելի բնակարանի առջեզրի: Սպայի սպասածին հակառակ, կայազորի պետն արդեն վերադարձել և իր սենյակի պատշգամբից դիտում էր գեղի իրեն եկող զինվորների թափորը: Սպան նկատեց նրան, ալլայլվեց, սակայն արդեն ուշ էր: Մահապարտը զինվորների օդակում շարունակում էր իր անհոգ ու անվրդով ընթացքը: Նա վիզն այս ու այն կողմ ծոելով, նայում էր կիսավեր շենքերին, խոտի դեղերին ու ցանկապատերին: Երբ թափորը մոտեցավ Կուգելին, մահապարտը ոտքի ծայրով հարվածեց մի փոքրիկ քարի, հետո վերցրեց այն, գըռպանից հանեց պողպատի մի կտոր, պողպատը քարին զարկեց և կայծեր առաջացնելով, սրտանց ծիծաղեց: Թափորը կանգ առավ Կուգելից ոչ այնքան հեռու: Մի պահ լուսթյուն տիրեց: Մահապարտը շարունակում էր պողպատը կայծաքարին զարկել և խնդալ յուրովի: Նա իր բաճկոնի ծվենների արանքից դուրս քաշեց մի կտոր սեացած բամբակ, դրեց քարի վրա և կայծով վառեց այն: Հետո բաճկոնի փեշը շրջելով, ցույց տվեց Կուգելին և ասաց.

— Ես բամբակն ինձ երեք ամիս հերիք է, աստվածվկա, երեք ամիս...

Կուգելի ալլագունած դեմքը զայրույթ էր արտահայտում: Նրա լուսթյունն սպանիչ էր: Սպան դողանար մոտեցավ նրան, ձգվեց ու զեկուցեց.

— Համարձակվում եմ զեկուցել, ձերդ զերազանցություն, որ այս պարտիզանի փախչելու միտումներն իմանալով, որոշեցինք իսկույն գնդակահարել...Սա ինքը, պետք է որ, սեամորուքը լինի, ալո՞ այն, նա...

Սպայի խոսքերն ըստ Երևույթին դուք չեկան Կուգելին, որը շարունակում էր նաև մահապարտի ձեռքի կայծաքարին, ջղայնորեն կրծտացըել ատամներն ու թեթևակի դողալ.

— Իսկ որտեղից իմացար, — զուսպ կատաղությամբ հարցըց նա:

— Մյուս բանտարկյալները միաբերան հաստատեցին:

— Ապրւշ, — պայմեց կուգելը, — նըանք քեզ հիմարացըել են, իսկ դու՝ ավանակի թուղ՝ հավատացել ես Ռուր ես տանում այս խենթին: Երեխ սրա գնդակահարությամբ կամենում ես մոլորեցնել ինձ... Դա քեզ չի հաջողվի... Փամփուշտ ես շռայլում, խողի մոռւթ... Հրամայված է որսալ սկամորուքին, և դու պետք է կտարես այդ հրամանը...

Մահապարտը գեռ զբաղված էր իր կայծաքարով:

— Պարտիզան է գնդակահարում, — թունոտ ծաղրանքով քըթմնջաց կուգելը, — սրա արձակած կայծերը քո փեշն էլ չեն խանձի, մինչդեռ ճանապարհին ես քիչ մնաց գլուխս թողնեի...

Կայազորի պետի զայրույթը պատահական չէր. զյուղի ճանապարհին պարտիզանները հարձակվել էին նրա ավտոյի վրա և նա, իրոք, հաղիկ էր փրկվել մահից:



Կուգելը հրամայեց իսկույն ետ տանել մուրացկանին, մի ջոկատ կազմել և հետապնդել իր վրա մահափորձ կատարած պարտիզաններին:

* * *

Մահապարտի վերադարձը մեծ զարմանք պատճառեց բանտարկյալներին:

Նրանք ամեն կողմից շրջապատեցին նրան և սկսեցին հարց ու փորձ անել.

— Ալդ ինչպէս... դե մի ասա, տեսնենք...

— Գնդակն ափսոսացին, — կարձ պատասխանեց մուրացկանը և գրպանից կալծաքարն ու պողպատը հանելով, սկսեց կալծեր ցայտեցնել ներքնահարկի կիսախավարի մեջ: — Իսկ ես տեսել եմ սկանորուքին... — անսպասելիորեն ավելացրեց նա:

— Ե՞րբ, ... Ո՞րտեղ... — վրա տվին ամեն կողմից:

— Երազում...

— Է՞հ, — հիսութափված ծոր տվին լսողները:

— Այս, ճիշտ եմ ասում, տեսել եմ: Ինքն էլ ինձ տեսավ և ասաց՝ անհոգ կացեք, եղբայրներ, կգամ, կազատեմ բալորիդ...

Ոչ ոք չհավատաց նրան: Բայց այդուհանդերձ մուրացկանի խոսքերը, նրա կայծաքարից արձակվող կայծերի պես, ցոլացին նրանց սրտում:

Մի շաբաթ անց մուրացկանն անհետացավ: Ումանք ենթադրեցին, թե նրան բաց են թողել, ոմանք, թե՝ նա ինքն է փախել: Ինչեիցե, շուտով նրան բոլորն էլ մոռացան, որովհետև սովոն ու հիվանդությունն իրենց մահաբեր շունչը տարածելով ներքնահարկի մոայլ պատերի մեջ, ավելի ծանր ու օրհասական մտածմունքներ բերեցին նրանց համար:

... Թշնամու ջախջախված զորամասի մնացորդները նահանջելով միացել էին Ն. գյուղի գերմանական կայազորին և կատաղաբար պաշտպանվում էին Սովետական Բանակի սրբնթաց հարձակումից։ Կոիվը բորբոքվել էր գյուղի մատուցներում։ Թշնամին կծկվում էր շեղջի վրա ընկած կարիճի պես, բայց համառորեն կառչում էր ամեն թփից, ամեն քարից։ Նրա ձախ զուրաթեվը ճեղքելով մեր հեծլալների մի խումբ, սլացավ գեպի կրակակետերի թիկունքը։ Այդ ճեղքով առաջ նետվեց նաև սովետական հետևակը։ Սկսվեց կարճատե, սակայն արյունահեղ մի սվինամարտ։ Հեծլալների խումբը զլիսավորող թիկնեղ զորականը թուրն օդի մեջ շողացընելով, ձիու սանձը թողած, սլանում էր խրամատից խրամատ, ամեհի մոլուցքով թրատում այնտեղ դարանակալած գերմանական ավտոմատավորներին ու գնդացըռորդներին։

Սիրնամարտը վճռեց կովի ելքը. թշնամին ջախջախվեց։ Գյուղի վրա փողփողաց ազատաբեր գլուշը։ Հեծյալը յուրավիհնների հետ շտապեց գեպի գլուղի կենտրոնը և կանդ առավ մի ներքնահարկի փակ դռան առջև։ Նա իր թիկնապահին հրամայեց կոտրել դուռը, ապա ձիու վրայից կռանալով, ձայնեց գեպի ներս։

— Դե, գուրս եկեք, եղբայրներ, սեամորտքը եկավ...

Ներքնահարկի կիսախավարից խարխափելով դուռս եկան տասնյակ հյուծված ու ոսկրացած ծերունիներ և ուրախության արցունքն աչքներին, փարփեցին իրենց ազատաբարներին։

— Մենք պետք է որ հին ծանոթներ լինենք. — ձիու վրայից խոսեց հրամանատարը, որ կուրծքը շքանշաններ

ըով զարդարված, գնդապետի աստիճանի մի զինվորական
էր, կարճ խուզած մորուքով և ծիծեռնակի թևերի պես
սղալած ընչանցքներով:

Ծերունիները խորագննին նայեցին նրան, բայց ոչ
ոք չճանաչեց: Միայն Իգնատ պապը, իր պղտոր աչքերը
կկոցած, մոտեցավ, նայեց, նայեց ու, հուզմունքը հա-
ղիվ զսպելով, մանկան նման ընկրկեց.

— Դու պետք է որ... պետք է որ... Նա լինես...

— Ասա, մի քաշվի — «մուրացկանը», — ավելացրեց
հրամանատարը և նրա դեմքը ողողվեց պայծառ ժաղիտով:

Այս, այդ պարթևահասակ հեծյալը նա էր՝ սկամո-
րուք պարտիզանը, լեզենդար հերոս Լիոն Դարբինյանը:

ԺԱՂԿԱԾ ՀՈՒԶՄՐՉԱՆ

1.

Աշնանային մոայլ ու մթապատ գիշերը, ասես իր
սուր մագիլները գետնի մեջ թաղած, ծանրորեն նստել
էր Ռեկրախնայի լայնածիր գաշտերի վրա։ Մաղվում էր
անձրեք։ Մաղվում էր մանր ու միալար, սրտամաշ ու
հոգնեցուցիչ կաթիլներով։ Գետինը թաց էր, լպրծուն,
տեղ-տեղ՝ լճածածկ, հողը՝ վիրավոր ու խոշտանգված։

Այդ անթափանց խավարի միջով հեղեղի նման զը-
նում էր գնդապետ Դարբինյանի զորամասը։ Գնում էր
օրերի ու ամիսների ծանր ու արյունահեղ մարտերից
հետո։ Գնում էր դժվարին արշավանքներից, անքուն
գիշերներից հլուծված ու հոգնած։

Աղմկվում էր խավարը մարդկանց ու ձիերի, տան-
կերի ու հրանոթների, ավտոների ու ռայլակների այդ
անօրինակ երթից։ Թվում էր, թե թանձը մթությունից
օգտվելով, ողջ բնությունն է ոտքի ելել և, վրեժի բորբ
տենդով բռնված, շարժվում, գնում է գեպի արևմուտք։

Տանկերը սողում էին մոալլ ու խստագեմ՝ զայրույ-
թից պինդ սեղմված ահարկու բռունցքների պես։ Հրե-
տանային մարտկոցներն ընթանում էին իրար սեղմված,
իրար միջով անցնող կայծակնաբեր ամպերի նման։ Հե-
տեակը քայլում էր լուռ ու ինքնամփոփի, ասես ծանը
ու մղձավանջային երազի միջով։

Մարտիկները շաբաթներով շոր չէին փոխել և այժմ
նրանց քրտնախաղ մարմիններն ալրվում, կսկզում էին
գաղջ խոնավության մեջ: Նրանց զուղձապատ ոտքերից
կարծես վիթանոցներ էին կախվել: Կապարե թիթեղներից
ծանրությամբ իջնում, փակվում էին նրանց թմրած աչ-
քերի կոպերը: Ու թվում էր, թե այդ անասելի հոգնա-
ծությունից ու անքնությունից հաղթված, ուր որ է նր-
բանը կթերվեն երթից, կընկնեն ցեխապատ գետնին ու
կթաղվեն խոր քնի մեջ: Բայց ոչ: Նրանք քալլում էին
առաջ ու առաջ, անվարան ու անտրառունջ, իրենց ոտ-
քերի տակ զգալով քայլ առ քայլ նվաճվող հայրենի
հողը:

Ծարավը խեղդում էր մարտիկներին: Նրանց պա-
պակած շուրջերը բռնվել էին այրուցքով: Բայց նրանք
զիտեին, որ առջևում Դինելըն է՝ լայն ու ջրառատ, հա-
րազատ մոր պես քաղցր ու զովասուն:

Եվ նրանք գնում էին դեպի այդ գերված մայրը:

Գնդապետ Դարբինյանի փորբիկ «վիլլիսը» թեթևու-
թյամբ ճոճվում էր ճանապարհի խորդուբորդությունների
մեջ, և երթ ընդ մերթ սղղալով ընկնում փոսերը, ապա անհիվ-
ների փութեատ տեղապտութից հետո կըկին գուրս նետ-
վում, Տափաստանային թեթե քամուց անձրիի կաթիլ-
ները շեղակի ծեծում էին մեքենայի բրեղենտե ծածկո-
ցը, կամ ներս խուժելով, ցըտությամբ ասեղնահարում
գնդապետի դեմքը:

Դարբինյանը մենակ չէր. նրա հետ միասին նույն
մեքենայով գնում էր նաև գումարտակներից մեկի հրա-
մանատարը՝ կապիտան Բալայանը. Գնդապետը սիրուժ
էր այդ խիղախ ու անվեհեր կապիտանին, որն իր գու-
մարտակով միշտ նետվում էր ճակատամարտի ամենա-
գժվարին հատվածն ու միշտ էլ հաղթանակում: Բայց

միայն այդ սերը չէր, որ նրան դրդել էր իր հետ վերցընելու Բալայանին։ Կապիտանի գումարտակը, որ այս անգամ ևս գնում էր էշէլոնի գլխամասում, առաջինը պիտի հասներ Դնեպրի արևելյան ափը և առաջինը կրտսեր այդ լայն ու հողգառատ գետը։ Դա մի չափազանց բարդ ու պատասխանատու առաջադրանք էր։

Նահանջող թշնամին վիրավոր գաղանի նենգությամբ պաշտպանություն էր բոնել Դնեպրի արևմտյան ափին, որն իր բարձր դիրքով, հողի ուղղահայաց կտրվածքներով տիրաբար իշխում էր հանդիպակած ափի վրա։ Գերմանացիները ոչինչ չէին խնայել իրենց դիրքերն անբացընելու համար։ Լարափակոցների խիտ ցանցը, գնդացըրալին ու ականանետային բները, դոտերն ու դզոտերը պատնեշի պես ձգվում էին ափի անբողջ երկալնքով։

Հետախուզության մանրամասն ավյալներից ելնելով, գնդապետը հարձակման օպերատիվ պլան էր մշակել և հասցըել իր ստորաբաժանումներից յուրաքանչյուրին։ Բայց, չնայած դրան, «վիլլիսի» մեջնա դեռ շարունակում էր Բալայանի հետ ծանր ու թեթև անել գետանցման ենտ կապված բազմաթիվ մանրուքներ ու անակնկալներ։

Դարբինյանը հուզված էր։ Նա շարունակում էր ստեղծագործել, ասես մի անմարելի բոցով այրվում էր ներքուստ։ Եվ որովհետև լուսթլունը նրա թշնամին էր, որովհետեւ նրա միտքը հախուռն թափով գործում է տարերքի պահին, կովի ու պայքարի մեջ, ուստի չէր կարողանում լուռ մնալ։ Նա շարունակում էր գետանցման նոր ձևեր հնարել երբեմն վիճել յուրովի, ժխտել մտածածը, կրկին վերադառնալ մշակած պլանին։

Բալայանը լսում էր ու սակավ արձագանքում։ Նա մտածում էր այդ զարմանալի մարդու ներքին կրքի, կենսունակության ու դիմացկունության մասին։ Այ, նա

Տի շաբաթ է աչք չի փակել։ Դոնե ալժմ մեքենայի մեջ
մի քիչ ննջի, մի քիչ հանգստանա:

«Վիլիսը» գնում էր առաջին էշելոնի կազմում։ Նրա
աջ ու ձախ կողմերից, մթության մեջ, լավայի պես հո-
սում էր մարդկանց ու տեխնիկայի ահագին զանգվածը։

Հեռվում՝ մի ինչոր տեղ ոռնում էր հրանոթը՝ խուլ
ու շնչահեղձ։

Հորիզոնից վեր մեկն ասես սուր դանակով կտրեց
թանձը ամպերով պատաճ երկնքի կուրծքը և արդ կարը-
վածքից պսպղաց մի աստղ՝ սառն ու կապտացոլք...

Գնդապետը լոեց։ Մոռացավ գետանցը։ Ննջում է,
թե խորհում։

— Լեռն...

— Խում եմ, ասա...

— Հո չես քնում...

— Զէ, մտածում եմ...

— Ի՞նչի մասին...

— Են, ով խմանա, Բալայան։ Շատ բանի մասին,
շատ բանի... Նամակներ պիտի գրեի, Բալայան, չեմ
գրել...

— Ում... տուն...

— Ի՞նչու միայն տուն։ Ծանոթների, բարեկամների:
Այ, մտածում եմ, Բալայան, թե այս երեք տարվա ըն-
թացքում ինչքան նոր ծանոթներ ու բարեկամներ եմ
ճարել։ Գիտես, թե քանի կյանք էր պետք մի այդպի-
սի բարեկամություն ստեղծելու համար։ Մեկի մանուկն
եմ կրակից հանել, մորը վերադարձել։ Մեկի վզից կա-
խաղանի օղն եմ հանել Մեկին գնդակահարությունից
փրկել Մեկին գրոհի տարել։ Մեկի հետ պարտիզանու-
թյուն արել Մեկ ուրիշն իմ կյանքն է փրկել։ Բայց

նը մեկը, մը մեկն ասեմ, Բալայան։ Եվ ահա այսօր բոլորից նամակներ եմ ստանում, բոլորին նամակներ ուղարկում, Եվ բոլորը միաբերան մի բան են խնդրում, Բալայան։ Գիտե՞ս ինչ…

— Ի՞նչ…

— Հաղթանակով վերադառնալ։ Իսկ հաղթանակը Դնեպրի այս ափին է, Բալայան։ Իսկ Դնեպրի այն ափը անցնելը շատ է դժվար։ Ա՛յ, գրա մասին եմ մտածում…

Գնդապետը կրկին լսեց։ Ու թեև մթության մեջ Բալայանը չէր տեսնում նրա գեմքը, բայց համոզված էր, որ մեքենաի հետ ճոճվելով, նա գեռ շարունակում է մտածեր, և շարժապատկերի արագությամբ գործող նրա միտքը ո՞վ իմանա, թե արդեն ուր է հասել։

Երկնակամարի ճեղոից պսպղող աստղը արդեն դուրս էր կանչել իր ընկերներից մի քանիսին և նրանք թարթը վում էին խմբով՝ ցըտից արցունքակալած աչքերի պես։

Մոտ ու հեռու դաշտերում, անտառների մեջ, բլուրների տակ ճողիվում էին անձրևաջրի լճակները, կոխկըրտվում էր խաշամը, խշրտում էին թփերը՝ անհանդրտացնելով ցերեկվա ահեղ որոտումներից հաղիվ խաղաղված հավքերին։

Այդ զորամասի հետախույզներն էին գործում, նրա սրատես աչքերն ու զգայուն ականջները։

2.

«Վիլիսը» վերջապես կանգ առավ. գնդապետն ու կապիտանն առուլգությամբ ցած իջան։ Սառն օդի ուժեղ հոսանքն խկույն ողողեց նրանց քնատ աչքերը, ճակատն ու այտերը։ Զտեսնելով էլ կաըելի էր զգակը մոտակայում գետ կա։

— Եվ իրոք, նրանց առջև Դնեպրն էր՝ լայնահուն ու
ահեղ, իր արագահոս ջրերի ծփանքն ափերին տված:

Դարբինյանը մոտեցավ գետին, հարդանքով հանեց
պլսարկը և սրտի խորքից, հուզաթաթավ կիսաձայնով
շնչաց.

— Ողջույն, հարազատ Դնեպր...

Ու թվաց, թե գետը լսեց նրան: Թվաց, թե գետը,
որդու փրկարար ձայնն առած մոր պես, խնդադին աղ-
մըկեց, խշշաց իր լայնագիր ափերի մեջ:

— Ողջույն, Դնեպր, — կրկնեց Բալայանը:

— Ողջույն, ողջույն... — լսվեցին գետափ իջած մար-
տիկների հուզաված շշուկները:

Նրանք ձեռնափերը գետի զովասուն ջրերի մեջ թա-
ղելով, ճողփում էին այն, բռերով վերցնում, խմում, ե-
րեսներով տալիս, խաղում ալիքների հետ: Դժվար էր
ասել, թե այդ պահին նրանցից ով ինչպես էր արտա-
հաբում իր փոթորկված հոգու ջերմ ապրումները:

Դիմացի ափից տկակում էր գնդացը ի խանձված կո-
կորդը: Թշնամին կրակում էր գետի մեջ: Կրակում էր՝
հենց այնպես՝ առանց նշանառության, իր ահից: Նա վա-
խենում էր Դնեպրից և ասես ամեն բովե ուզում էր
սաստել նրան:

Բալայանն անցավ իր գումարտակի ստորաբաժա-
նումները: Հետախույզ դասակի հրամանատարը գնդա-
պետի մոտ բերեց Դնեպրի առափին գործող պարտիզանա-
կան ջոկատի հրամանատարին, որի հետ մի քանի օր
շարունակ զորամասը սերտ համագործակցության մեջ
էր: Զոկատը շատ բան էր նախապատրաստել հաջող
գետանցման համար: Շինվել էին բազմաթիվ լաստեր,
նավակներ, որոնք մեծ մասամբ փայտե երկան դբի
էին նմանվում:

Գրողա—այսպես էին կոչում պարտիզանական ջուկատի հրամանատարին։ Նա բարձրահասակ ու լավագանջմի մարդ էր։ Դնեպրի նավատորմի նախկին բոցմաններից մեկը։

— Անիրավներն ինչքան ուժ ու հնար ունեն՝ ամրացըրել են, — երեսը դեպի գետի արևմտյան ափը թեքելով, խռով Գրողան։

Նրա մտահոգ շեշտից Դարբինյանը զգաց, որ գործը շատ ավելի բարդ է, քան իրենք էին կարծում, բայց չվարանեց։

— Իսկ մենք վճռել ենք անհապաղ սկսել...

— Եվ վատ չեք անի, — հավանություն տվեց Գրողան, — պետք է անակնկալի բերել։ Այլ կերպ՝ շատ կը գըժվարանա...»

— Լաստերը հեռու են...

— Ոչ, գետափին, բաղեղուտների մեջ...

Նույն պահին կապիտան Բալայանը մոտեցավ նրանց։

— Գումարտակը պատրաստ է, լնկեր գնդապետ...

Այլևս ժամանակ չկար սպասելու ինժեներային հիմնական միջոցների մերձեցմանը։

— Սկսեցեք, — հրամայեց Դարբինյանը։

Դժգույն աստղացուքի տակ գծվող կապիտանի լսովերանկարն անհայտացավ։

Սկսվեց գետանցումը։

Դնեպրն իր գիրկն առավ առաջին մակույկները, որոնցով գնում էին զինավառ հետախույզները։

Թշնամու ուժն ու ուշադրությունը շեղելու համար անցումը կատարվում էր մի քանի տեղից։

Պարտիզանական նավակներով փոխադրվում էին հետևակն ու հրետանին։ Լաստերն իրենց լայն ու երերուն մեջքի վրա թեթևությամբ տանում էին առաջին։

տանկերը։ Մարտիկներից ոմանք չսպասելով նավակի, գետի հորձանուտ ջրերին էին հանձնվում բենդինի դատարկ տակառներով, անվակալներով, կամ գերաններով։ Նրանց բոլորին մադնիսի պես ձգում, քաշում էր գետի արևմտյան ափը։

Ասես այնտեղ՝ Դնեպրի այն ափին նրանց հարազատ տունն էր, հարազատ օջախը՝ բոցերի բերանն ընկած, և նրանք մի անդիմադրելի ուժով ձգտում էին վերահասու լինել ահեղ վտանգին, փրկել՝ մեկն իր ծնողին, մեկն իր որդուն, մեկն իր սիրած աղջկան, մեկն էլ իր ընկերոջը, բարեկամին, հարեանին։

Գերմանացիները, ըստ երեսու յթին մոտալուտ վտանգն զգալով, ուժեղացրին հրածությունը։ Գնդացըային և ականանետային մարտկոցների ահարկու կրակի տակ Նիկոլայ Զայցեի մակույկը մի քանի անգամ ափ հացըրեց մարտիկների նորանոր խմբեր, զենք ու զինամթերք։ Մակույկը տասնմեկ տեղից ծակծկվել էր։ Զուրը հետզհետե լցվում էր ներս։ Խորտակման վտանգը սև սպառնալիքի պես կախվում էր Զայցեի զլիսին։ Բայց նա գերմարդկային ուժով մաքառում էր դժվարությունների դեմ, անցնում ափից-ափ, միաժամանակ կատարելով սանիտարի ու կապագորի պարտականություն։

Նավակներից մեկով, հետեակալինների հետ միասին, գետի արևմտյան ափն էր փոխադրվում Գրողան։ Նավակըն բնկավ թշնամու ուժեղ կրակի տակ։ Արձճի հեղեղ էր թափվում գետը։ Արկերը և ականներն անապատալին օձերի պես թշում էին աջ ու ձախ։

Միթե պլճնում կլինի։ Հետեակալը սրտնեղում էր։

— Ա՛խ, գոնե ափ հասնենք, — սրտի խորքից բացագանչում էին ոմանք, — գոնե ոտք գնենք ամուր հողի վրա, գրոհի գնանք, ու եթե մեռնենք էլ՝ սրտներիս դարդ չի լինի...

— Հիմար ցանկություն է, եղբայրներ, — հեգնում էք
Քրողան: — Մահե՞մահ է — ցածաքում, թե ջրի մեջ: Ե-
կեք ապրելու մասին մտածենք: Թե չէ, երդվում եմ ջռւ-
ըն ավելի հյուրընկալ է, քան հողը...

Նույն պահին արկի ուղիղ դիպումով մոտակա լաս-
տերից մեկը շեշտակիորեն սուզվեց ջրի տակ:

Երբ լաստը կրկին ջրի երեսն ընկավ, նրա վրայի
տանկն այլիս չկար: Գերանները չոված մատների պես
հեռացել էին իրարից: Կիսաքանդ լաստն ուղղությունը
կորցնելով, արագորեն իջնում էր գեղի հորձասուտը, իր
վրա տանելով գերաններից կտոշած մի խուժք զինվոր-
ների: Նա գալիս էր ուղիղ գեղի նավակը: Հանդիպելու
գեղքում պետք է խորտակեր այն: Թիավարող մարտի-
կը ճկունությամբ խույս տվեց: Հին բոցմանը, որ ակա-
մայից կանգնել էր նավակի մեջ, ձեռքերն օդում թա-
փահարելով, ձախ տվեց անցնող լաստի մարդկանց.

— Տղերք, միք վախի, պարանը... պարանը...

Նրանցից մեկն ինչոք բան շղրտեց ղեղի նավակը:
Քրողան հենց օդի մեջ որսաց այն ու նետվեց ջուրը:
Մարտիկներն ապշեցին: Ուր գնաց նա: Ի՞նչի համար:
Արդյոք փրկելու կիսաքանդ լաստի մարդկանց, թե՝ մեռ-
նելու նրանց հետ:

Կապիտան Նիկիտինի գումարտակի հետ Դարբին-
յանն անցավ Դնեպրի աջ ափը և խկույն ձեռնարկեց
պլացդարձի գրաֆմանը: Նրա հնարամիտ պլանով Բալա-
յանի գումարտակը շրջանցեց գետափից ոչ հեռու գրտ-
նըվող այն փոքրիկ գյուղը, ուր ամրացել էր թշնամու-
տիփապաշտպան կայազորը: Բալայանի ստորաբաժանումը
թիկունքից ձնարքի պես վրա տվեց ու խուժեց գլուղի
փողոցները: Նիկիտինի գումարտակն ու պարտիզանները
զորաթերից օգնեցին Բալայանին, և գյուղը գրավվեց:

Շշմած ու սպրսավահար թշնամին ուշքի եկավ մի-
այն լուսագեմին։ Գիշատիչ անդղների երամը ու ամպի
պես վաղ առավոտից կախվեց զետանցի վրա։ Խոյըն-
թաց ոմբակոծիչները կատաղությամբ բզկտում, տակն
ու վրա էին անում առափնյա հողի յուրաքանչյուր պա-
տառը։ Բայց արդեն ուշ էր։ Շուտով վրա հասավ նաև
մեր կործանիչ ավխացիան, և Դնեսլրի ջրերն արտացո-
լեցին օդային կատաղի մարտերի դալարուն ծուխն ու
բոցը։

Գետանցը ցերեկը չէր գործում։ Ամեն ինչ ինամքով
ծածկվում, քողարկվում էր։ Բայց ահա աղջամուղջը թանձ-
րանալուն պես մարդիկ կրկին դուրս էին գալիս գաղտ-
նուղիներից, բլինդամներից, թաքստոցներից և վերսկը-
սում իրենց աշխատանքը։

Իսկ գետի արևեմտյան ափում գնդապետ Դարբինյանի
ստորաբաժանումները մահացու կոխվներով պաշտպանում
էին նվաճած պլացդարմը, — առաջին կտոր հողը՝ Դնեպ-
րի այն ափում։

Թշնամին մեծ թվով զորք ու զինամթերք կուտա-
կելով, կատաղի հարձակման էր անցնում, որպեսզի մե-
րոնց գետը թափի։ Սակայն գնդապետի արծիվները,
հերոսաբար կասեցնում էին զերմանացիների գրոհները։

Դարբինյանը դիրքից-դիրք, խրամատից-խրամատ
անցնելով, ոգեսրում, քաջալերում էր իր զինվորներին,
ետ շպրտում թշնամուն, քայլ առ քայլ ընդլայնում նվա-
ճած պլացդարմը։

3.

Մի երեկո, երբ գնդապետն իր բլինդաժի փոքրիկ
սեղանի մոտ նստած նամակ էր զրում, մռայլված ներս
մտավ համհարդն ու բեկրեկուն ձախով գեկուցեց։

— Գումարտակի հրամանատար կապիտան Բալայանը
խփեց...

— Ի՞նչ... — շանթահար վեր թռավ Դարբինյանը:
Ասես բլինդաժը քանդվեց նրա գլխին. աչքերը մթնե-
ցին: — Այդ ի՞նչ ասացիր... ե՞րբ... ի՞նչպես...

— Կապավոր եկավ! Դուրսը սպասում է...

— Կանչիր իսկույն:

Ռոպե անց կապավորը, որը Գրոզայի փրկած մար-
տիկներից էր, զլխահակ կանգնեց գնդապետի առջև:

— Մեռավ... — մոռայլված հարցը Դարբինյանը:

— Բժիշկն ասաց՝ ըոպեների հարց է, — կիսախեղդ
պատասխանեց կապավորը:

Դարբինյանը զլխարկն ու մուշտակը վերցնելով,
իսկույն դուրս նետվեց:

«Վիլիսը» նրան թոցը մոտակա գյուղը: Բալա-
յանին տեղավորել էին իր ազատագրած գլուղի միջնա-
կարգ դպրոցի սենյակներից մեկում: Մահամերձի մոտ
միայն բժիշկն ու բուժքույրն էին: Մյուսները միջանց-
քում հավաքված, դուան ճեղքից մոայլ լոռությամբ նա-
յում էին դեպի ներս:

Երբ «Վիլիսը» կանգ առավ դպրոցի առջև, միջանց-
քում մի կիսածայն շշուկ տարածվեց:

— Գնդապետը...

Բոլորն ակնածանքով ետ քաշվեցին: Դարբինյանն,
ասես ոչի չնկատելով, ուղիղ դիմեց դեպի սենյակը:

Կապիտանը պառկած էր լուսամուտի մոտ, երկաթե-
ցածրադիր մահճակալին՝ մեջքի վրա: Նրա աչքերը փակ
էին: Շնչում էր թույլ, անուժ: Լամպի աղոտ լույսը հա-
զեվ էր երերում նրա դալուկ ճակատին:

Դարբինյանը բժշկին մի անկուն տարավ.

— Միթե՞ հնար չկա, բժիշկ... — արցունքախեղդ
ճայնով հարցը եց նա:

— Ոչ - պատասխանեց վերջինու:

Նրանք կրկին մոտեցան հիվանդին։ Դաըրինյանը չէր ուզում հավատալ ոչ միայն բժշկին, այլև ինքն իրեն։ Նրա աչքերի առջև մեռնում էր արծիվը։ Մեռնում էր նա, ում ճախրանքը, քաջությունն ու անվեհերությունն այնքան հաղթանակներ էր բերել ժողովրդին։

—Ո՞չ, չի կարող պատահել, —խորտակված սրտով յուրովի կրկնում էր գնդապետը։ Սա Բալայանը չէ։ Միթե իմ արծիվը կարող է ալսպես խաղաղությամբ անձնատուր լինել մահին…

Եվ գնդապետը բոպե առ բոպե ուզում էր խելացնոր աղաղակով փարվել նրան, սթափեցնել, ուշըի բերել…

Բժշկի սպասածին հակառակ, Բալայանը երկար ժամանակ լուս ու անմոռունչ մաքառում էր մահվան դեմ։ Դաըրինյանը ոչ մի վայրկյան չէր հեռանում նրանից։

Եղավ ըոպե, երբ մահամերձը բացեց աչքերն ու հանգչող հայացքով նայեց իր վրա խոնարհված գնդապետի դեմքին։ Ճանաչեց նա, ինչ ասաց, ինչ կտակեց—ոչ ոք չիմացավ, ոչ ոք չհասկացավ Դաըրինյանից բացի։ Եվ միայն նա էր, որ մահամերձի վերջին հայացքին գործվանքով պատասխանեց։

—Կանեմ, աղիդ ջան, կանեմ…

Հետո, երբ Բալայանի աչքերը փակվեցին, Դաըրինյանը հարազատի ջերմությամբ համբուրեց նրա սառ ճակատը, ետ շրջվեց, թեով ծածկեց աչքերը, դուրս եկավ միջանցք ու ազատություն տվեց իր վարար արցունքներին։

4.

Իր կիսատ նամակը Դաըրինյանը շարունակեց մի քանի օր հետո՝ 1943 թվի հոկտեմբերի 19-ին։



«...Յուլյա ջան,—սրտի
կսկիծով գրում էր նա իր
կնոջը,—Բալայանին թաղե-
ցի կիևի մարզի Պրեյալավի
շրջանի Վորաբենցի գյու-
ղում՝ դպրոցի շենքի մոտ: Նրա
գերեզմանի վրա իմ ուժե-
րով մի «շքեղ» հուշարձան շի-
նեցի՝ փայտից ու տախտա-
կից:

Ա՛խ, եթե որևէ մեկի
աչքերն էլ իմ աչքերի կող-
քին լինեին, տեսնեին, թե
ինչպիսի հերոսությամբ նա
անցավ Դնեպրը, գրավեց

գյուղը, հնարավորություն տվեց ամբողջ սիամուրմանն
անցնել՝ ապա նրանց տերն անշուշտ կասեր՝ «է՞հ, Լևոն,
ի՞նչու այդպես էժանագին հուշարձան շինեցիր ընկե-
րոջտ վրա...»:

Դարբինյանը չէր չափազանցում: Բալայանը մի իս-
կական գյուցազուն էր: Հայրենիքը բարձր գնահատեց
նրա խիզախությունն ու անվեհերությունը, շնորհելով
նրան Սովետական Միության Հերոսի կոչում:

5.

Նամակն ուղարկելուց երկու ամիս անց, կիևի մոտեր-
քում ծավալված մի արյունահեղ կռվում քաջաբար գոհ-
կեց նաև ինքը՝ մեծ մարտերի լեզենդար հերոս Լևոն
Խնկանոսի Դարբինյանը:

Էնկերները նրան թաղեցին կորոստիշև ավանի մի
կանաչ պուրակում, նրա թարմ շիրմաթմբի վրա խոնար-
հեցին զորածասի մարտական դրոշները, երդվեցին անո-
ղոք վրեժ լուծել թշնամուց, ապա հրացաններն ամուր
սեղմած, կրկին շրջվեցին դեպի արևմուտք:

Գնդապետ Դարբինյանը հարազատ որդու նման
պայքարել էր Ուկրաինական հողի ազատագրման համար,
ուստի հողը գթառատ մոր պես նրան իր գիրկն առավ:

Կորոստիշև ավանային Սովետը մի գեղեցիկ հու-
շարձան կանգնեցրեց Դարբինյանի գերեզմանի վրա, իսկ
կառավարությունը նրան շնորհեց Սովետական Միու-
թյան Հերոսի բարձր կոչում:

* * *

Ասում են ամեն գարնան, երբ բնությունը պճնվում
է ձոխ ու սիդավետ կանաչով, երբ ուրախ թոշներգից
զնդում է գարնան զուլալ օդը, երբ արևի կենսատու-
շողերը ջերմությամբ փարվում են հողին—մի ուրույն
տեսք է ստանում կորոստիշև պուրակում բարձրացող
հուշարձանը:

Ասում են ժողովուրդն ալնքան ծաղիկներ է ցանել
հայ ժողովրդի զավակ, լեգենդար հերոս Լեռն Դարբին-
յանի հուշարձանի շուրջը, որ հեռվից նայողին թվուժ
է, թե այդ հուշարձանը և ծաղկել է յուրովի:

- ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

1. Իմ ընթերցողներին	3-19
2. Կրոշկա	20-28
3. Զինվորական խորամանկություն	29-34
4. Հայրիկի նամակը	35-43
5. Կայծաքարը	44-57
6. Ծաղկած հուշաբան	



Գատ. խմբագիր՝ Արմ. Թամազյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Լաբոյան
Մըրագրիչ՝ Թ. Կանքեղյան
Կոնսուլ սըրագրիչ՝ Ն. Քալաջյան

ՎՃ 05152, պատվեր 577, տիրաժ 4000,
Հեղ. 1,8 մամ., տպագր. 33/4 մամ.։ Հանձնված է
արտադրության 13/VII-48 թ.։ Ստորագր. է տպագրության
Հայոց համատի տպագրան, Երևան, Հենինի փ. Հ. 65.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220029503

Գիւլ 2 Ռ.

